ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔԱՆԵՐՔ

ԵՒ

ՊԱՏՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Дозволено цензурою. 22 Ноября 1888 г. Тифлисъ
Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1888

ԹԻՓԼԻՍ. ՔԱՂԱՔԱՑԻՆ ՏՈՒՆ.

Digitized by Google

«ԱՂԲԻՒՐ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՕՄ

Ա Ր Ա Ր Ա Տ

ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԱՆՔ

«Գրական Հանդիսից»

Շխարհիս վըրայ մէկը կար միայն,
Որ ինձ սիրում էր Հոգւով անաբատ.
Նա իմ մայրիկն էր, իմ անուշ Ազին,
Հոգուս ու մարմնուս ծնողն Հարազատ:

Միտքս թռչում է միշտ դէպի երկինք,
Երբ որ յիշում եմ մայրիկիս անուն.
Այդ նըրանից է, որ չեն երկրային
Ոչ նըրա ըստինք, ոչ նրա լեզուն:

Նա ինձ կաթ տըւաւ, տըւաւ և լեզու,
Միևնը քան զմիւսն աւելի անուշ.
Մէկով իմ փափուկ մարմինն էր սնւում,
Միւսով զարգանում իմ Հոգին քնքուշ:

Ի՞նչ կայ այնքան քաղցր ու սննդարար,
Որքան անարատ կաթն է մայրական.
Ո՛վ կարէ խօսիլ այնպէս սրտաբուղխ,
Ինչպէս որ մայրն է թոթովում մանկան:

Կարծես հիմա էլ տեսնում եմ մօրըս.
Ես իրրև մանուկ գրկումն եմ ահա.
Նուրբ շրթունքներիս զարկում է մատով,
Որ իր հետ ձայնեմ «աղո՛ւ» կամ «ագա՛»:

Ես թոթովում եմ. հրճւում է մայրըս.
Իմ մէջ տեսնում է շնորհքի նշան,
Չար աչքից ազատ պահելու համար՝
Վրրաս կարում է պէսպէս թալիսման:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԴԻՑԱԶՆԱԿԱՆ ԱՉԽԱՐՀ

ՕՇԱՓ

1.

Նէ որ ձեզ ասելու եմ, սիրելի մանուկները, պատահել է մեզանից՝ ով գիտէ՝ քանի-քանի հազար տարի առաջ...

Եւ սո՛ւտ հասարակ բոլոր հրաշալիքները, որ ես ձեզ պատմել եմ, պատահել են շատ վաղուանից, ո՛վ գիտէ ո՛ր ժամանակ։

Ելլադայի հրաշալի աշխարհում, մի բարձր սարի տակից՝ բղխում էր մի պատուական աղբիւր։ Որքա՜ն տարի է անցկացել, բայց այն աղբիւրը դեռ մինչև այսօր էլ կայ, և բղխում է մի և նոյն տեղից։

Օրը մթնելու վրայ էր, արեգակն անց էր կենում սարերի քամակը և իր վերջին ճառագայթներով ոսկեզօծում էր մեր ասած լեռնային աղբիւրը, երբ մի երիտասարդ՝ Բելլերօֆօն անունով՝ մօտեցաւ նրան։ Երիտասարդը մի սանձ ունէր ձեռքին, մի սանձ, անգին գոհարներ հագցրած և ոսկենկար վորագրուածներով զարդարած։ Նա աղբիւրի մօտ տեսաւ մի ծերունի, նրա մօտ միջահասակ մի գիւղացի, մի սիրուն գանդուրիկ տղայ և մի մատաղահաս աղջիկ, որ ուզում էր ջուր տանել աղբիւրից։ Երի-

տասարդը կանգ առաւ այդտեղ և խմելու ջուր ուղեց աղջկանից։

—Ի՜նչ հրաշալի ջուր է, ասաց նա, երբ որ խմեց և յետ դարձրեց փարչը։ Աղջիկը փարչը ողողեց և նորից լցրեց։

—Սիրո՛ւն աղջիկ,—ասաց երիտասարդը,—խնդրեմ ասես ինձ, այս աղբիւրը չունի՞ արդեօք մի որ և իցէ անուն։

—Ինչպէ՞ս չէ, պատասխանեց ջահիլ աղջիկը,—սա Պիրենայի աղբիւրն է։ Ես իմ տատիկիցս լսել եմ, որ Պիրենան մի սիրուն կնիկ է եղել։ Երբ որ նրա որդուն նետով սպանել է որսորդուհի Անահիտը, Պիրենան այնքան է լաց եղել, այնքան ողբացել, արտասուել, որ ինքը տեղնուտեղը աղբիւր է կտրւել (դառել է աղբիւր)։ Սրանից է, որ այսքան պաղ, այսքան անո՛ւշ է այս աղբիւրը. սրա կաթիլները որդեսէր մօր սրտի կաթիլներն են։

—Ես չէի կարծիլ երբէք, որ այսպիսի մի պայծառ, ուրախ և խաղացկուն աղբիւրը—արտասուքից լինէր առաջ իր ծագումը։ Սրա կարկաչիւնն այնքան ուրախ է և այնքան գեղեցիկ է փայլում արևի տակ։ Ուրեմն սա ինքն է Պիրենայի աղբիւրը։ Սիրո՛ւն աղջիկ, շատ շնորհակալ եմ քո տւած տեղեկութեանդ համար։ Ես շատ հեռու տեղից եմ գալիս, և հէնց սրան էի մանգալիս, սրան էի փնտրում։

Միջահասակ գիւղացին, որ իր կովը բերել էր ջուր տալու աղբիւրից, աչքերը յառած՝ բոլոր ժամանակ բելլերօֆոնին էր մտիկ տալիս և նրա ձեռքում եղած հրաշալի սանձին։

—Բարեկամ, երևում է, որ ձեր կողմերում լեռնային աղբիւրները մի չքտեսնւած զարմանալի բաներ են,—ասաց նա երիտասարդին և դրա համար է, որ ալարըդ չի եկել, և այնքան հեռու տեղից եկել ես Պիրենայի աղբիւրը գտնելու։ Եւ այդ ինչ է պատահել քեզ, բարեկամ, երևի ձիդ կորցրել ես։ Սանձն ինչո՞ւ համար ես բռնել

ձեռիդ։ Եւ ինչ սիրուն զուգս ունի, ինչ սիրուն զարդարանք։ Երկու շարք, բոլորն էլ անգին քարեր։ Եթէ ձիդ էլ սանձիդ նման է եղել, դրան յարմար, ուրեմն շատ ափսոս, եթէ կորել է։

—Իմ ձին չի կորել, ասաց երիտասարդը ժպտելով։ Ես դեռ նոր պիտի գտնեմ այն երևելի ձին, որ իմաստուն մարդկանց ասելով պէտք է որ ձեր կողմերումը լինի անպատճառ։ Բարեկամ, դու ինքդ լսած չկա՞ս, Պեգաս անունով թևաւոր ձին հիմա էլ գալիս է արգեօք Պիրենայի աղբիւրից ջուր խմելու, ինչպէս որ սովորութիւն է ունեցել այն հին ժամանակները, երբ դեռ կենդանի է եղել քո ապուպապի ապուպապը։

Գիւղացին ուրախ-ուրախ խնդմնդաց երիտասարդի այս ասածի վրայ։

Իսկ դուք, իմ սիրելի ընթերցողներ, լսած կա՞ք արդեօք, որ Պեգաս անունով մի ձի է եղել, հրեղէն ձի, ձիունի նման սպիտակ, արծաթափայլ շքեղ թևերով։ Նա կենդանի է եղել Հելիկոն սարի գագաթի վրայ։ Պեգասը եղել է շատ կայտառ և աշխոյժ, արագընթաց և թեթևագնաց. նա բարձրանալիս է եղել մինչև ամպերը և այնքան բարձր, ուր արծիւն անգամ չէր կարող հասնիլ։ Նրա նման էլի մի ուրիշ ձի չի եղել բոլոր աշխարհքումս, նա չի ունեցել իրա հաւոր։ Ոչ ոք նրան չի թամքած, ոչ ոք չի սանձած, չի պայտած, և նա շատ և շատ տարիք ապրել է Հելիկոն սարի գագաթին մեն-մենակ, ազատ և բախտաւոր։

Եւ ինչքա՜ն ուրախ էր անց կացնում իր կեանքը թևաւոր ձին։ Գիշերները քնում էր անուշ քնով, բաց-բացահաւր, ուր և իցէ մի լեռնային հարթ տափարակի վրայ, իսկ ցերեկւայ մեծ մասն անց էր կացնում այս և այն կողմ թռչելով։ Պեգասը ոչ մի բանով նման էլ չէր մեր ձիանոնց։ Մէկ էլ էիր տեսնում, անց էր կենում ահա մարդկանց գլխներով, թռած բա՜րձր, բարձր, և արևը

պսպղում էր նրա արծաթափայլ թևերի վրայ. այնպէս էր թուում, թէ նա մի մեծ սպիտակ թռչուն է, մոլորւել է ամպերի մէջ, և ճանապարհ է փնտրում դէպի պարզ և կապուտակ երկինքը: Մարդ չէր ուզում աչքերը հեռացնել, երբ մտիկ էր տալիս և տեսնում, թէ ինչպէս է սուզւում նա բամբակի նման բարդ-բարդ կուտակւած սպիտակ ամպերի մէջ: Սուզւում է, անհետանում մի երկու րոպէ, մէկ էլ տեսնում ես, որ ահա թռչում է նա ամպերի միւս կողմով: Չաւաքւում, կուտակւում են մըրկալից ամպեր, երկինքը սևանում է, գետնքի վրայ, շաչում-շառաչում է փոթորիկը, բայց Պեգասն իսկի այնում չի դգում – նրա հոգը չէ բնաւ—սլանում, սաւառնում է մի ամպից դէպի միւսը և հրաշէկ թէժ վայլակը լուսաւորում էր նրան ծիրանեգոյն լուսով: Թաքչում էր վայլակը, և Պեգասն անհետանում էր թանձր խաւարի մէջ: Մարդկանց մէջ այսպիսի մի հաւատ կար, որ երբ թէ՝ ով որ արժանանար մէկ անգամ նայելու այս հրաշալի տեսարանին, այնուհետև ամբողջ օրերով նա կ'զգար մի առանձին հոգեկան ուրախ տրամադրութիւն:

Ամառը՝ լաւ եղանակ ունեցող օրերին, Պեգասն իջնում էր ամուր գետնի վրայ և իր արծաթափայլ թևերը ծալելով՝ չափ ընկնում դէս ու դէն և սար ու ձոր ոտքի տակ տալիս, և այդ անում էր հէնց այնպէս, միայն իր զւարճութեան համար: Ամենից շատ տեսել են նրան Պիրենայի աղբիւրի մօտ, ուր նա անյագութեամբ խմելիս է եղել նոյն աղբիւրի ջրից կամ թաւալելիս փափուկ կանաչ կուտի վրայ: Պատահել է և այնպէս, որ Պեգասը գիշում է եղել մի քանի ծաղիկ սպիտակ կամ կարմիր առւոյտից, նրանցից էլ ընտրելով աւելի քաղցրերը: (Նա շատ զգոյշ է եղել արածելիս, շատ չմահաւան, ամեն խոտից չէր արածիլ):

Մեզանից մի քանի հարիւր տարի առաջ, շատ մար-

դիվ էին գնում Պիրենայի աղբիւրի մօտ և շատ անգամ, այն յուսով, որ ինչպէս լինի՝ գոնէ մէկ անգամ նայեն Պեգասի վրայ։ Իսկ գնացողներն աւելի ջահիլ մարդիկ էին լինում՝ երիտասարդ և պատանի, որոնք ամենից շատ էին հաւատում, թէ կան թևաւոր և հրեղէն ձիաները։ Բայց վերջին ժամանակները Պեգասը շատ հազիւ էր երևում։ Աղբիւրից մի կէս ժամու չափ հեռու եղած գիւղացիք իրանց օրումը տեսած չէին Պեգասին և ոչ էլ հաւատում էին, թէ կարող է լինել այնպիսի մի հրաշալի ձի։ Այժմ Բելլերօֆօնի հետ խօսող գիւղացին նոյն չըհաւատացողներից էր, սրա համար էլ շատ խնդաց, երբ ասացին, որ իբր թէ Պեգասը գալիս է և Պիրենայի աղբիւրից ջուր խմում։

—Այ քեզ բան... ինչեր են հնարել,—բացագանչեց նա, տափակ քիթը վեր ցրցելով և սկսեց քրքրզալ։—Պեգաս ձի, և այն էլ թևաւոր... Բարեկամ, երևում է որ խելքդ կորցրել ես,—ասաց նա երիտասարդին։—Թևերն ինչ հարկաւոր են ձիուն։ Մինթէ թևաւոր ձին աւելի լաւ բեռը կրկրէ։ Ճշմարիտ, էլ պայտելու ծախս չէր ունենալ նրա տէրը, բայց ինչ օգուտ դրանից։ Կերթար դոմը, որ Պեգասին դուրս քաշէր այնտեղից, բայց մէկ էլ տեսար քո Պեգասրդ... թռռռ... այսօր ես կորել, թէ էգուց։ Դէ հիմա ետևիցն ընկիր, տեսնեմ որտեղ պիտի դտնես նրան։ Մի օր կըհեծնի, որ երթայ ջաղաց, մէկ էլ տեսար քո Պեգասրդ թը՛ռ-թը՛ռ-թը՛ռ... դէպի երկինք, և այնտեղից իր տիրոջը—թը՛ըրրակ... դէպի դետինք, այն էլ գլխիվայր, կտիպո՛ւզ, գլըխկոնձի... Չէ, չէ, եղբայր, մի հաւատար, պեգաս-մեգաս չըկայ։ Աշխարհքումս թռչնաձի չի եղել և չի էլ լինիլ երբէք։

—Ես պատճառ ունիմ բոլորովին ուրիշ կերպ մտածելու, ասաց երիտասարդը առանց վրդովւելու, և իսկոյն երեսը դարձրեց դէպի ծերունին, որ կանգնած էր նրանից

երկու քայլաչափ հեռու և իր գաւազանի վրայ յեցած, ուշադրութեամբ ականջ էր դնում նրանց ասածներին. նա մինչև անգամ դրա համար ղլուխը փոքր ինչ թեքել էր դէպի նրանց և ձեռքով ականջի մի կողմը ծածկել վահանի պէս, որ լսել կարողանայ։ Վերջին քսան տարին ծերունին համարեա թէ խլացել էր բոլորովին։

—Դու ինչ կասես, պ՛ապի, հարցրեց երիտասարդը. դու քո ջահիլ ժամանակդ անպատճառ տեսած կըլինես թեւաւոր ձին և շատ անգամ։

—Ես, հոգի չան, լիշողութիւնս կորցրել եմ բոլորովին։ Միտս է գալիս միայն, որ ջահիլ ժամանակս հաւատում էի, որ կայ թեւաւոր ձի. այսպէս հաւատում էին և նոյն ժամանակի բոլոր ջահիլները։ Իսկ հիմա միտք էլ չի մնացել գլխումս, էլ իմ ինչ ժամանակն է թեւաւոր ձիու մասին մտածելը։ Եթէ պատահած էլ լինիմ Պեգասին, այդ հիմա՝ ով գիտէ՝ քանի՛ ժամանակւան բան կըլինի, վաղո՛ւց, շատ վաղուց կըլինիմ պատահած։ Իսկ հիմա, ուղիղն ասեմ, դժւարանում եմ հաւատալ, որ երբ և իցէ տեսած էլ լինիմ Պեգասին։ Միտս է գալիս երազի նման, որ երեխայ ժամանակս, ահա այստեղ՝ աղբիւրի մօտ՝ մէկ անգամ՝ կարծես թէ՝ նկատեցի ձիու հետք։ Կարելի է թէ Պեգասի հետքը լինէր, կամ՝ ով գիտէ՝ գուցէ նրա հետքը չէր, այլ մի ուրիշ ձիու։

—Իսկ դո՞ւ, սիրուն աղջիկ,—հարցրեց ջահիլ աղջկանը, որ կուժն ուսին՝ կանգնած էր նրանց կշտին և ականջ էր դնում ծերունու ասածներին,—դու անպատճառ տեսած կըլինիս Պեգասին, ես հաւատացած եմ։ Դու տեսած կըլինիս, այո՛, դու այդպիսի սուր-սուր աչքեր ունիս։

—Ինձ այնպէս է թւում, որ մէկ անգամ տեսած պիտի լինիմ նրան, պատասխանեց ջահիլ աղջիկը՝ ժպտելով և կարմրելով։—Ուղիղ իմ գլխի վրայով՝ բարձր, շատ բարձր՝ օդի մէջ՝ սաւառնում էր մի բան. թէ ասեմ Պեգասն էր,

—Պեգասը չէը, թէ ասեմ մի ահագին սպիտակ թռչուն էր,—թռչուն չէը: Բայց մի ուրիշ անգամ էլի եկայ այստեղ՝ կուժն ուսիս, և յանկարծ ձիու վրնջիւն (խրխինջ) լսեցի: Սիրտս այնպէս ուրախացաւ, որ չեմ կարող ասել. այնպէս մի քաղցր, այնպէս մի աշխոյժ վրնջիւն էր: Բայց այսու ամենայնիւ ես վախեցայ, չըգիտեմ ինչից, և վազեցի տուն՝ առանց ջրի, դատարկ կժով:

—Ախա՛ն, ասաց պատանին և երեսը դարձրեց դէպի վոքրիկ տղան, որ նրա մօտ կանգնած էր և նայում էր Բելլերօֆօնի վրայ վարդանման բերանը լայն բաց արած: Մանուկները միշտ այսպէս են նայում անծանօթ մարդկանց վրայ:

—Դու ինչ կասես, սիրուն մանկիկ, հարցրեց Բելլերօֆօնը ծիծաղելով և շոյելով երեխայի գանգրիկ մազերը: Դու շատ անգամ տեսած կըլինիս այստեղ Թևաւոր ձին:

—Շա՛տ անգամ, այո՛, վստահաբար պատասխանեց մանուկը:—Հեռու չէ, հէնց երէկ ես տեսայ նրան. առաջ էլ ես միշտ տեսել եմ նրան:

—Ապրի՛ս, ապրի՛ս, բացագանչեց երիտասարդը, մօտ քաշելով երեխային: Հապա՛, եղբայր, մէկ լաւ մօտեցիր և պատմիր ինձ, տեսնեմ ինչպէս ես տեսե՛լ:

—Ահա թէ ինչպէս: Մէկ անգամ գալիս եմ այստեղ, աղբիւրը, որ նաւթիկները ձգեմ ջրի վրայ և նախշուն քարեր հաւաքեմ: Շատ անգամ աչքս ջրի մէջն եմ գցում մտիկ տալիս և տեսնում եմ նրանում, որ երկնքովը թռչում է մէկ ոսկեթաւ Թևաւոր ձի: Սիրտս միշտ ուզում է, որ նա իջնի երկրի վրայ, ինձ վերցնի հետը և տանէ լուսնի վրայ դնէ: Բայց հէնց որ վեր եմ կենում կանգնում, որ ուղղակի ձիուն մտիկ տամ, մէկ էլ տեսնում եմ՝ էլ ձի չըկայ, անհետանում է իսկոյն ամպերի մէջ:

—Բելլերօֆօնն աւելի երեխային հաւատաց, որ Թևաւոր Պեգասի պատկերը տեսել էր աղբիւրի մէջ անդրա-

դարձած, մէկ էլ մատաղահաս աղջկանը, որ լսել էր Պեգասի քաղցր ձայնով վրնջալը, ու մէկ էլ ծերունուն, բայց ոչ գիւղացի ռամկին, որ միայն լծկան ու բեռնակիր ձիաների գոյութեանն էր հաւատում և ոչ թևաւոր:

2.

Բելլերոֆոնը մի քանի օր շարունակ թափառեց Պիրենայի աղբիւրի մօտերքում և թևաւոր ձիու բուստնը պահեց: Նայում էր փոփոխակի՝ երբեմն երկնքին և երբեմն ջրին, միշտ յուսալով, որ մէկնումէկում կըտեսնի կամ իրան Պեգասին և կամ նրա անդրադարձութիւնը: Թանգագին սանձը միշտ պատրաստ ունէր ձեռին: Ծօտակայ գիւղացիք շատ անգամ իրանց տաւարը ջուր տալու բերելիս, ծիծաղում էին երիտասարդի վրայ և երբեմն նաև խրատ էին տալիս, ասելով. «Այդ ինչ դատարկաշրջիկ տղայ ես դու. զուր ժամանակ ես անց կացնում միայն. աւելի լաւ չէը լինել, որ մի որ և իցէ գործով զբաղուէիր: Չի ես ուզում առնել,—ա՛ռ, մենք ծախու ձիան շատ ունինք»: Երբ որ Բելլերոֆոնը չէր ընդունում նրանց ասածը, նրանք առաջարկում էին, որ ծախէ իր սանձը:

Գիւղի մանուկները նրան խենթ էին համարում, ծաղրում էին, փէշերքից ձգձգում էին, ծամածռութիւնները էին անում, զանազան փուտ անուններ էին կպցնում: Երեխայքը իրանց ծաղրածութիւնը մինչև այնտեղը հասցրին, որ նրանցից մէկը, հինգ տարեկան մի լակոտ, ինքն իրան Պեգաս ձևացրեց, սկսեց լոք-լոք անել, ոստոստալ, վազվզել, այս ու այն կողմ չափ ընկնել, տրտինգ տալ, ծառս կենալ, կռները թափահարելով. իբր թէ իր կռներն էլ Պեգասի թևերն են. իսկ նրանից մեծ մի ուրիշ երեխայ, մի փունջ խոտ ձեռին՝ մօտենում էր նրան և առանձնական բացագանչութիւններով մօտ կանչում Պեգա-

սին: Բոլոր այս ծաղրածութիւնները սորքել էին, որ տը-
նազ անեն Բելլերօֆօնին և ջդրացնեն նրան: Բայց նրանց
հակառակ՝ այն դանգուրիկ և կայտառ մանուկը, որին ա-
ռաջին օրը հանդիպեց Բելլերօֆօնը, չէր հետևում նրանց
օրինակին և շատ սիրում էր Բելլերօֆօնին: Նա լուռ ու
մունջ նստում էր Բելլերօֆօնի մօտ, լուռ ու մունջ նա-
յում ջրի վրայ անընդհատ, սրտանց հաւատալով, որ իր
տեսածն ուղիղ էր: Երեխայի այս հաստատուն հաւատը
մեծ յոյս էր տալիս և խրախուսում Բելլերօֆօնին

Բայց դուք, սիրելի ընթերցողներըս, դուցէ կրհար-
ցընէք ինձ, Թէ Բելլերօֆօնն ինչո՞ւ համար էր ման գա-
լիս Պեգասին, ինչ առիթ ունէր, ով էր ստիպում նրան:
Այս մի երկար պատմութիւն է, և ես կաշխատեմ պատ-
մել ձեզ՝ մինչև Պեգասի երևալը:

Եթէ Բելլերօֆօնի բոլոր արկածները պատմեմ նրա
մանկութիւնից սկսած, այդ շատ երկար կըլինի և ձեզ
ձանձրալի. մեր քաջ երիտասարդի կեանքից ես կըպատմեմ
ձեզ միայն մի կտոր:

Աշխարհի այն մասը, ուր որ կենում ենք մենք հա-
յերըս, ասվում է Ասիա: Ահա այս Ասիայումը մի զարհու-
րելի հրէշ է լոյս ընկնում, որ ասվում է Քիմեռ կամ Խի-
մերա, որ հայերէն չէ. մենք կասենք Օշափ, որ լսած
կըլինիք շատ անգամ: Բայց այս հրէշը մի ուրիշ տեսակ
Օշափ է լինում: Թէ որքան վնաս է հասցնում մարդկանց
Օշափը, անկարելի է հաշուել: Նա մի այնպիսի զարհու-
րելի բան է լինում, որ նրա նման մի ուրիշ բան չենք
կարող ցոյց տալ աշխարհիս երեսին: Նա լինում է օձի
մարմնով, մեծ վիշապ-օձի նման. ունենում է երեք
գլուխ՝ մէկն առիւծի, մէկն այծի և մէկն էլ օձի: Նրա
բայց ըռէխներից՝ երեքից էլ՝ կրակ էր դուրս թափւում: Այս
հրէշը թէպետ թևեր չունէր, բայց վազում էր առիւծի
նման, ցատկում էր այծի նման և սողում օձի նման. ու-

բեմն նա շարժւում էր մխանդամից երեք կենդանու արաւ-
գուԹեամբ, որ ասել է՝ աւելի արագ քան Թէ Թռչունը։

Թէ որքան վնաս էր հասցնում այս զղւելի արարածը, ինչպէս ասացի, անկարելի է հաշւել։ Երեք բռնեխնեբից (երախ, գազանի բերան) կրակ էր դուրս շնչում և բոլոր անտառները խանձխնձում, արտերն այրում, ամբողջ գիւղերը՝ իրանց պարտէզներով, այգիներով, ամբարներով, կալ ու մարագով, մի խօսքով՝ բոլոր ունեցած չունեցածով մոխիր էր դարձնում։ Բայ էր անում երեք երախները և սկսում էր լափել ամեն պատահած բան—մարդ, կենդանի և Թռչուն։ Լափելուց յետոյ շնԹռկում, մրափում էր, մինչև ողջ-ողջ կուլ տւած ողորմելի կենդանիքը կըմարսւէին նրա Թոնրանման ստամոքսում։

Մէկ անգամ պատահմամբ, Բելլերօֆոնը գալիս է Ասիա, այնտեղի Թագաւորին տեսնելու Հէնց այն ժամանակ, երբ որ ամբողջ Թագաւորութիւնը Հեծում, տնքում էր Օշափի հասցրած վնասներից։ Թագաւորի անունը Յոբաթ էր, նա կենում էր Հայաստանին սահմանակից մի երկրում, որ սւսում էր Լիկիա։ Բելլերօֆոնը մի շատ անվեհեր երիտասարդ էր։ Նա իրան անձը նւիրել էր քաջագործութեան և այնպիսի մեծագործութիւնների, որոնցով կարող էր օգուտ բերել մարդկութեանը, ծառայել մարդկանց բախտաւորութեանը։ Այն ժամանակներում երիտասարդ մարդկանց մեկ վառք ու պատիւն այն էր, որ մասնակցեն բոլոր պատերազմներին, կամ կռւելով Հայրենիքի Թշնամու դէմ, կամ չար դեվերի, զարհուրելի վիշապների, և վերջապէս վայրենի գազանների դէմ, այս էլ այն ժամանակ, երբ ուրիշ աւելի չար բան չէր լինում, որի դէմ կռւէին։ Յոբաթ Թագաւորը, երբ որ Բելլերօֆոնին տեսաւ, խոկոյն նշմարեց, որ իր Հիւրն անվեհեր երիտասարդ է, սրա Համար էլ ահա առաջարկեց նրան, որ գտնի չար Օշափին և սպանէ։ Ոչ ոք սիրտ չէր

անում ձեռք զարկել այսպիսի մի քաջագործութեան, որովհետև ամենքն էլ նրա մեայն անունը լսելով՝ դողում էին, իսկ եթէ չսպանէին, նա պիտի ամբողջ Լիկիան անշէն անապատ դարձնէր։ Բելլերոփոնը Թագաւորի այս առաջարկութեան վրայ մի բոլոր մտածութեան մէջ ընկաւ, բայց յետոյ վճռական խօսք տւաւ Թագաւորին, որ կերթայ կ'սպանէ Օշափին, իսկ եթէ չկարողանայ, իր ոսկորները նրա մօտ կըթողնէ։

Լսած լինելով, որ երեքգլխեան Օշափը շատ արագաշարժ և ճարպիկ է, այն մտքին եկաւ, որ անկարելի է այնպիսի մի հրէշի դէմ հետևակ կռւել, այլ դրա համար հարկաւոր է անպատճառ ձեռք բերել ամենաքաջ և ամենազօրեղ ձի։ Իսկ այս կողմանէ աշխարհքիս երեսին ինչ ձի կարող էր հաւասարվիլ Պեգասին, որ համ ոտքեր ունէր, համ թևեր, և օդի մէջ աւելի և արագ էր թռչում, քան վազում երկրի երեսին։ Ինչ ասել կուզի, որ Բելլերոփոնին ամեն կողմից սկսեցին հաւատացնել, որ թևաւոր ձի չկայ ոչ մի առպաստանում (իլիսի), և ինչ որ պատմում են թևաւոր ձիանների մասին, բոլորն էլ դատարկ զառանցանքներ են միայն և անմիտ ցնորքներ։

Բայց այսու ամենայնիւ, Բելլերոփոնը հաստատ հաւատացած էր, որ Պեգասը հնարովի բան չէ, այլ նա կայ և ուշ թէ վաղ՝ իր ձեռքը կընկնի, որ նրան կըսանձէ լինքը և վրան հեծնելով՝ կերթայ Օշափի հետ կռւելու։

Այս նպատակով ահա նա Լիկիայից ճանապարհ ընկաւ դէպի Ելլադա, ուր և ձեռք բերաւ իր ձեռքում եղած թանգագին սանձը։ Այդ սանձն աղօթած էր, այսինքն կախարդած, դիւթած էր։ Չէնց որ կարողանար սանձի ոսկեզօծ երեսանը Պեգասի բերանը դնել, թևաւոր ձին իսկոյն կըհպատակէր նրան, նա էլ իսկոյն կըթռչէր, վրան կընստէր և որ կողմ ուզենար, այն կողմը կըքշէր։

Ինչ ասել կուզի, որ քաջ երիտասարդը յուզած սըր-

տով սպասում ու մնում էր, թէ երբ կըդայ արդեօք Պեգասը Պիրենայի աղբիւրից ջուր խմելու։ Նա շատ էր մըտատանջւում, թէ մի գուցէ Յօբաթ թագաւորը կարծիք տանէր, թէ նա փախել է՝ վախենալով Օշափից։ Շատ էր վշտանում, երբ որ միտն էր բերում, թէ ինչ ահագին վնասներ է հասցնում երկրին այն գազրալի հրէշը, իսկ ինքը՝ փոխանակ նրա դէմ պատերազմելու, ձեռները ծոցին՝ նստել է սառնորակ աղբիւրի մօտ և նայում է թէ ինչպէս է բղխում նա սարից, թափւում աւազանի մէջ և նրա յատակը ծածկում պսպղուն աւազի շերտով։ Լսում էր, որ իբր թէ վերջին տարիներում Պեգասը շատ հազիւ էր երևում աղբիւրի մօտ, և թէ նա իր բոլոր կեանքում միայն մէկ անգամ է երևացել մարդու։ Նա շատ էր վախենում, թէ մի գուցէ այստեղ սպասելով, մինչև ծերութեան հասնի, երբ այլ ևս չի կարողանալ տիրել թևաւոր ձիուն, եթէ գալու էլ լինի, որովհետև ծերութիւնից իր ձեռքերն արդէն թուլացած կըլինին, քաջութիւնը կորցրած։ Աւաղ, ինչքա՜ն տխուր և դատարկ է անցնում ժամանակը, երբ որ եռանդալից երիտասարդութիւնը ձըգտում է հասնել իր ցանկացած նպատակին, երևակայած փառք ու պատիւն։ Համբերել և սպասել՝ շա՜տ ծանր է։ Մեր կեանքը՝ առանց այս էլ՝ այնքան կարճ է, բայց էլի ինչքա՜ն դատարկ տարիներ ենք անց կացնում՝ համբերութեան շնորհիւ։

Բելլերօֆօնի բախտից՝ աղբիւրի մօտ եղած դանգուրիկ երեխան այնպէս կպել էր նրան, որ մօտիցը չէր հեռանում Համարեա։ Ամեն բարիլուսի Բելլերօֆօնին ասում էր ուրախ-ուրախ.—ի՞նչ ես կարծում, Բելլերօֆօն, շա՜տ կարելի է որ այսօր մենք Պեգասին տեսնե՛նք։

Եւ այս «շատ կարելին» էր, որ յուսադրում էր Բելլերօֆօնին։ Եթէ այս յոյսը չըլինէր, նա վաղուց արդէն վերադարձած կըլինէր Լիկիա և գնացած կուէլու Օշա-

վի հետ առանց թևաւոր ձիու օգնութեան: Ինչ ասել կուզի, որ հրէշը մի շնչով կայրէր և մի քանի վայրկեանի մէջ կըլափէր նրան: (Ես ձեզ, սիրելի մանուկներ, խոստանում եմ տալ կուտելու այս երկրային զզուելի արարածների հետ, մինչև ձեռք բերած չըլինիք օդեղէն թևաւոր ձին):

3.

Մի առաւօտ դանդուրիկ տղան սկսեց Պեգասի մասին խօսել սովորականից դուրս անկասկած սրտով:

— Ըղիտեմ ինչու, ասաց նա, ուրախութիւնից թըռչկոտելով, ինձ այնպէս է թւում, որ այսօր մենք անպատճառ կըտեսնենք Պեգասին:

Ամբողջ օրը մանուկը չըհեռացաւ Բելլերօֆոնից: Ներանք միասին հաց կերան, միասին խմեցին աղբիւրից և կէսօրից յետոյ նստեցին շւաքումը, ջրի ափին: Բելլերօֆոնը մի ձեռքն իր վոքրիկ բարեկամի ուսին դրած, իսկ մեւսն իր ծնոտի տակ դիմհար տըւած, խորասուզած մտքով՝ մտիկ էր տալիս ջրի վրայ կուացած պառաւած ճառերին և նրանց ճղների վրայ կախուտած վայրենի խողողի ճութերին: Իսկ մանուկն անընդհատ նայում էր միայն ջրին, բայց շատ տխուր, որովհետև շատ էր ցաւում, որ Բելլերօֆոնի երկար օրերով սպասելն ապարդիւն է անցնում: Սրա վրայ շատ տխրեց երեխան, մինչև այն աստիճան, որ յանկարծ լաց եղաւ հեկեկալով: Նրա արտասուքներից մի քանի կաթիլ դլորւելով՝ ընկան աղբիւրի մէջ և խառնուեցան Պերենայի արտասուքների հետ:

Յանկարծ Բելլերօֆոնն զգաց, որ երեխայի թաթիկը, որ իր ձեռքումն էր, դողդղում է: Եւ տղան շըշնջաց յանկարծ մանկական շըշնջիւնով.

—Բելլերօֆոն, Բելլերօֆոն, նայիր, մէկ նայիր ջրի վրայ . . .

Բելլերոֆոնը կռացաւ շուտով, նայեց հայելու նման պարզ աղբիւրի երեսին, և այնպէս թւեցաւ, որ տեսնում է նրանում պատկերացած մի ահագին, սպիտակ թռչնի կերպարանք. թռչում է բարձր, շատ բարձր, և արեգակը շողշողում է նրա արծաթափայլ թևերի վրայ:

— Ի՞նչ հրաշալի, ի՞նչ փառաւոր թռչուն է, բացագանչեց նա: Եւ ինչքա՜ն մեծ է: Եւ գիտե՞ս, շատ էլ հեռու չըպէտք է լինի. սաւառնում է ամպերից ցած:

—Ես դողում եմ ամբողջ մարմնովս, ասաց մանուկը: Վախում եմ դէպի վեր նայել: Ինչքա՜ն հրաշալի է: Բայց ես չեմ վստահանում ուղղակի նրա վրայ նայել, այլ միայն ջրի մէջնորդութեամբ: Մի՞թէ չես տեսնում, Բելլերոֆոն, որ սա թռչուն չէ, այլ թևաւոր ձի, նոյն ինքը Պեգասն է սա:

Բելլերոֆոնի սիրտը գնաց: Նայեց դէպի վեր, բայց չըկարողացաւ լաւ նշմարել, թէ նա ինչ էր արդեօք, թռչո՞ւն թէ ձի, որովհետև նա անյայտացաւ բարդ-բարդ կուտակուած սպիտակ ամպերի մէջ: Մի րոպէ չանցած՝ թռչողի կերպարանքը կրկին երևաց. նա իջնում էր դէպի գետին ալեծածան թռիչքով: Այս միջոցին Բելլերոֆոնն իսկոյն ճանկը ձգեց տղային և նրա հետ թաք կացաւ խիտ թուփերի մէջ, որոնցով՝ պարսպի պէս՝ շրջապատած էր աղբիւրը: Նա Պեգասից երկիւղ չունէր, այլ վախենում էր միայն, թէ մի գուցէ իրանց նկատէ և սկսէ աւելի բարձրանալ դէպի վեր: Այս թռչողը ճշմարիտ որ թևաւոր ձին էր: Երկար սպասեցին նրան, և ահա վերջապէս նա ուզեցաւ իր ծարաւը յագեցնել Պիրենայի աղբիւրից:

Օդեղէն հիւրն սկսեց իջնել աւելի ցածր և ցածր: Թռչելիս աւելի մեծ շրջաններ և պտոյտներ էր անում, ինչպէս աղաւնին է անում թռչելու պատրաստուելիս: Որքան ցածրանում էր, այնքան փոքրացնում էր իր շրջանները, մինչև վերջապէս շփուեցաւ գետնին՝ փափուկ բմբլի

պէս։ Նա իր չորս ոտները դրաւ աւազի վրայ այնքան մեղմ և անըզգալի կերպով, որ ոչ մի խոտ չըխշխշաց։ Հրաշալի Թևաւոր ձին մեկնեց իր վեհապանծ դլուխը և սկսեց խմել։ Նա մեծ զմայլմունքով էր ներս ծծում բերանով պայծառ հեղուկը, ուրախ փռնչում ու զինքը թափահարում. խմում է խմում, մէկ էլ յանկարծ կանգ առնում։ Ոչ դետնի վրայ, ոչ ամպերում և ոչ մի ուրիշ տեղ Պեգասը չէր սիրում այնպէս յագեցնել իր ծարաւը, ինչպէս Պիրենայի աղբիւրից։ Կուշտ խմելուց յետոյ, Թևաւոր ձին Հոտաւէտ առւոյտներից մի քանի ծաղիկ դՀլեց, բայց միայն դՀլեց ու ծաղծամեց և ոչ Թէ արածեց կամ կերաւ. նրա արածելիքը Հելիկոն սարի բուն դագաԹի վրայ եղած անուշահոտ խոտերն էին։

Վերջապէս երբ որ աղբիւրի պարզ ջրից այնքան խմեց, որ կշտացաւ, մի քիչ խաղ արաւ եօնջի ծաղիկների Հետ, (առւոյտին եօնջա էլ ենք ասում) այնուհետև խայտալ սկսեց կշտացած երեխայի նման։ Սկսեց վազվզել յետ ու առաջ, տրտինգ տալ, կամացուկ վրնջել (խրխընջալ)։ Մէկ այս կողմն էր չալի ընկնում, մէկ այն, մէկ էլ Թռչում էր դէպի վեր, մի քիչ պտրտւում և նորից իջնում ու վազվզում փափուկ կանաչկուտի վրայ։ Բելլերոֆոնը՝ տղայի ձեռքերից բռնած՝ Թիւտի միջից նայում էր այս տեսարանի վրայ, որի պէս դեղեցիկ բան նա իր կեանքումը տեսած չէր։ Պեգասի ողջ կազմւածքը, նրա բարակ-բարակ ոտները, նրա բարեկազմ դլուխը, Թաւամազ պոչը, ալեծածան բաշը, ձիւնի նման սպիտակ, արծաԹի պէս փայլուն, այս բոլորը Հիացրել, զմայլեցրել էին Բելլերոֆոնին։ Իսկ նրա խելօք և վառվռուն աչքերի նմանը ոչ մի ձիում տեսած չէր։ Նրան յանցանք էր Թւում այսպիսի մի Հիանալի ձիու վրայ Թամք դնելը, և առաւել ևս՝ նրա վրայ ցատկել նստելը։

Մէկ Թէ երկու անգամ Պեգասը կարծես Թէ Թալ-

կացաւ, Թուլացաւ. կանդնում էր յանկարծ, ականջները խլրշում, հոտ քաշում, գլուխն այս ու այն կողմ ձրգում, կարծես զգալով, որ իր մօտ դարանամուտ եղած մարդիկ կան։ Բայց երբ որ չբտեսաւ և չլսեց ոչինչ վտանգաւոր բան, նորից սկսեց իր առաջւան խաղերը։

Բայց ահա որպէս Թէ յոգնեցաւ վերջապէս, Թևերը ծալեց և նստեց փափուկ կանաչկուտի վրայ։ Թեթև օդի զաւակ լինելով՝ նա չէր կարողանում քիչ ժամանակ հանգիստ կենալ, շրջեց քամակի վրայ և ոտները վեր ցըցած՝ սկսեց սահել մէջքի վրայ։ Ինքը Թևաւոր, մեն-մենակ ամբողջ աշխարհում, անյիշելի ժամանակներից ի վեր ապրած, ոչ մի ընկեր չունեցած երբէք, այժմ զարհանում էր ինչպէս բոլոր էակներից ամենաբախտաւորը։ Սա մի հետաքրքրական տեսարան չէր միթէ։ Բելլերօֆօնն ու մանուկը չէին կարողանում աչքները Պեգասից հեռացնել։ Նրանք մասամբ հաճոյքից և մասամբ երկիւղից շունչները փորրներն էին դցել, ըստ որում աննշան մի շշուկից և շշունչից կրկնատնէր Պեգասը և նետի պէս կը սլանար դէպի երկինք։ Բաւականաչափ Թաւալ-գլոր դալուց յետոյ՝ վերջապէս Պեգասը շակւեց և հասարակ ձիու պէս դանդաղ կերպով առաջի ոտները ձրգեց, որ վեր կենայ։ Բելլերօֆօնն խոկոյն դիւի ընկաւ, որ ձին վեր կենալուն պէս՝ պիտի ճանապարհ ընկնի՝ նա մի ակնթարթում դուրս ընկաւ Թփուտից և մի ճարպիկ ոստիւնով Թռաւ նստեց ձիու քամակին։

Այո, նստեց Թևաւոր ձիու վրայ...

Երևակայել պէտք է, Թէ ինչպէս վեր Թռաւ Պեգասը, իր կեանքումն առաջին անգամն զգալով իր վրայ հողեղէն մարդու ծանրութիւն։ Վեր Թռչել եմ ասում, բայց չըկարծէք, որ մի հասարակ ոստիւն էր որ արաւ Պեգասը։ Բելլերօֆօնը դեռ խելքը գլուխը չէր հաւաքել, որ Պեգասի հետ արդէն դետնքից բարձրացել էին մինչև հինգ

Հարիւր ոտնաչափ և պանում էին նետի արագութեամբ։ Թևաւոր ձին նրա տակին վռնչում էր և երկիւղից և զայրոյթից դողում, սարսափում։ Թռան գնացին միշտ բարձր ու բարձր, մինչև Հասան ամպալից օդի ցուրտ շերտերը, որոնց վրայ մի քանի րոպէ առաջ՝ Բելլերօֆօնը՝ գետնին պարկած՝ նայում էր և սքանչանում։ Այդ բարձրութիւնից

ձին ուղղակի ցած նետեց ինքը զինքը, որ մի ժայռի կամ ուրիշ բանի դիպչելով՝ չարդուխուրդ անի իր հեծեալին։ Բայց այսպիսի բան չըպատահեց. Բելլերօֆօնն այնպէս չէր կպել նրան, որ բաց թողնէր կամ վայր ընկնէր, բայց սրա վրայ ինչ բաներ արաւ չարացած թևաւոր ձին, ինչ ճար-

պիկուԹիւնները բանեցրեց. ցիրկում խաղացող ակռաբաղներն այն չեն անում, ինչ որ մեր Պեգասն արաւ օդի մէջ. ինչ վեր-վեր Ժռչել, ինչ օրօրւել, ինչ աքացիք շպռտոտել դէս ու դէն, ինչ տրտինգներ տալ: Գլուխը գցում էր առաջի ոտների արանքը, Ժևերը վեր ցըցում և սկսում, մէկ Ժէ երկու, գլուխկոնձի տալ կապիկի նման: Ջուռ էր գալիս մէջքի վրայ և ոտները վեր ցըցելով՝ Ժափահարում ինքը ղինքը, կամ գլուխը դէպի պոչն արած՝ երկուտակւում էր և սկսում պորտւել չարխի պէս: Վերջապէս շատ բաներ արաւ, տեսաւ որ Հնար չի լինում, չի կարողանում վայր գլորել Բելլերօֆոնին, վիզը Ժեքեց և կրակոտ աչքերը վրան ձգելով, դունչը մեկնեց որ կծէ: Նա այնքան Ժափ տուաւ իր Ժևերը, որ նրանցից մի արծաԺագոյն փետուր դժլւեցաւ և ընկաւ Հէնց այնտեղ, ուր կանգնած էր գանգուրիկ տղան: Նա իսկոյն վեր առաւ պահեց՝ իբրև Պեգասից և Բելլերօֆոնից մնացած յիշատակ:

Երբ որ Պեգասը, ինչպէս ասացինք, ատամները սրած, դունչը մեկնեց որ մէկ լաւ կծէ, Բելլերօֆոնը նրա այս դրուԺիւնից օգուտ քաղեց և ազօԺած սանձի երասանակը ձգեց իսկոյն Ժևաւոր ձիու բերանը: Եւ, ով հրաշք, Պեգասն իսկոյն Հանդարտւեց և դարձաւ բոլորովին ձեռնասուն մի ձի: Ուղիղն ասեմ, ես շատ կասկածայի և կրցաւէի, տեսնելով մարդուն Հպատակած այնպիսի մի ազատ Ժռչնաձին, ինչպիսին Պեգասն էր: Այս յանկարծական փոփոխուԹիւնը, ազատուԹիւնից դէպի ստրկուԹիւնը, անղգալի չէր Պեգասի համար: Նրա դէպի Բելլերօֆոնն ուղղած խելօք աչքերի մէջ արտասուքի պէս բան երևացին: Բայց երբ որ երիտասարդն սկսեց փաղաքշելով շփել նրա գլուխը և մի քանի քաղցր ու խաղաղացնող խօսքեր ասել, Թէև տիրողի եղանակով—այն ժամանակ Ժևաւոր ձին ուրախուԹեան վրնջիւն բարձրացրեց: Նա կարծես բաւական մնաց իր ներկայ վիճակից, որ նա, այն-

քան դարերից յետոյ, վերջապէս մի ընկեր ու հրամայող ունեցաւ։ Երևի այսպէս է որոշուած բոլոր թևաւոր ձիաների ճակատագիրը, և առհասարակ բոլոր վայրենի կենդանիների։ Չէնց որ մի անգամ նուաճեցիր նրանց և տէրը դարձար, նրանք այնուհետև կըհպատակեն քեզ և կ'ընտանենան քեզ հետ։

Պեգասն ու Բելլերօֆօնը՝ իրար հետ կռուելիս՝ անկատելի կերպով շատ հեռու էին թռել, մինչև հասել էին մի բարձր սարի։ Բելլերօֆօնն առաջ էլ էր տեսել այն սարը, գիտէր, որ նրա անունը Հելիկոն էր, գիտէր նմանապէս, որ Պեգասը սովորաբար նրա գագաթի վրայ էր արածում։ Բայց ձեռնասովոր դարձած թևաւոր ձին այժմ զրկւած էր իր ազատ կամքից, նա չէր համարձակում թռչել դէպի իր ուզած կողմերը, և շարունակ յետ էր մտիկ տալիս, կարծես կանգ առնելու հրաման լինէր ուզելիս։ Վերջապէս նա հանդարդ կերպով իր թռիչքն ուղղեց դէպի գետինը, անհամբեր սպասելով, թէ երբ կիջնի արդեօք իրանից հեծեալը։ Բելլերօֆօնը ցած թռաւ նրա մէջքիցը, բայց ձեռքից չըթողեց նրա սանձը, որ պիտի փաթաթել էր ձախ ձեռքի դաստակին։ Պեգասն անընդհատ նայում էր իր նոր տիրոջ վրայ. նրա սիրուն և ազդու աչքերի մէջ երևում էր այնպիսի հեզութիւն, որ Բելլերօֆօնի խելքը տանում էր։ Նա սկսեց խղճալ դերի ընկած Պեգասին, որ դարերով ազատ էր ապրել, և վճռեց արձակել նրան և ազատ թողել։ Մեծահոգութեան զգացմունքով սաստիկ ոգևորւած, նա կախարդական սանձը ձգեց նրա վզովը և բերանից հանեց երասանը։

—Գնա՛, Պեգաս, ասաց նա։—Դու ինձ հարկաւոր չես, եթէ ես սիրելի և հաճելի չեմ քեզ։

Թևաւոր ձին մի ակնթարթում անյայտացաւ նրա աչքից։ Նա Հելիկոնի գագաթից դէպի վեր սլացաւ բազէի նման շեշտակի։ Արևն արդէն վաղուց էր մայր մտել,

ներքևում, երկրի վրայ մուրճն էր, իսկ սարի վրայ՝ դեռ ժամաժանք — վերջալոյս: Պեգասը թռաւ ամպերից էլ բարձր և կարճես լողում էր այնտեղ արևի վերջին ճառագայթներից անդրադարձած ծիրանեգոյն լոյսի անաղօտ ալիքների մէջ: Դէպի վերև ու վերև թռչելով՝ ներքևից երևում էր նա մի պսպղուն կէտի չափ և վերջապէս բոլորովին անհետացաւ երկնքի անյատակ կապտութեան մէջ: Բելլերօֆոնն ընկաւ երկիւղի մէջ: Նա շատ վախեցաւ, թէ չըլինի, չիրաւի՝ Թևաւոր ձին այլևս չերևայ ոչ մի անդամ: Նա արդէն սկսեց զղջալ իր արարմունքի վրայ. «այս ինչ խելք էր, որ ես բանեցրի», ասում էր նա ինքն իրան. բայց մէկ էլ տեսաւ, որ պսպղուն կէտը նորից երևաց երկնքի վրայ և սկսեց կամաց-կամաց իջնել դէպի ցած և ցած մինչև վերջապէս իջաւ իր տիրոջ առջև: Այս փորձից յետոյ այլ ևս տեղիք չըկար կարծելու, որ Թևաւոր ձին կըփախչի երբ և իցէ: Ձին և իր տէրը մտերմացան իրար և այնուհետև հաւատում էին միմեանց առանց կասկածելու:

Այս գիշեր մեր երկոքին բարեկմները տեղաւորւեցան մի ժայռի խոռոչում և քնեցան իրար կողքի, և Բելլերօֆոնը բոլոր գիշերը ձեռքը չըհեռացրեց Պեգասի վզից, ոչ թէ զգուշութեան, այլ շատ սիրելուն համար: Վաղ առաւօտւայ բարիլուսին վերկացան և միմեանց ողջունեցին ամեն մէկն իր սեփական լեզուով:

4.

Բելլերօֆոնը մի քանի օր կացաւ Չելեկոնի վրայ Պեգասի հետ. այս միջոցին նրանք աւելի մօտեցան միմեանց և աւելի մտերմացան: Շատ անդամ միասին օդային ճանապարհորդութիւն էին անում և երբեմն այնքան էին բարձրանում, որ գետինքը նրանց աչքում լուսնի չափ էր

երևում: Նրանք գնացին մի քանի երկիրներ. ամեն տեղ նրանց տեսնող մարդիկը զարմանում էին և կարծում էին, որ թևաւոր ձիով ճանապարհորդող սիրուն երիտասարդը Olիմպոսից կըլինի իրանց մօտ հիւր եկած: Պեգասի համար մեծ բան չէր օրական մի քանի հազար մղոն տեղ թռչելը: Բելլերոֆոնը յափշտակւել էր այս տեսակ կեանք վարելուց. նա բոլոր կեանքն ուրախութեամբ անց կրկացնէր մթնոլորտի վերին խաւերում, ուր ամեն ժամանակ, ինչ տեսակ եղանակ էլ լինէր երկրիս վրայ, միշտ պարզ էր և տաք: Բայց նա չէր կարող մոռանալ իր տըւած խոստումը Յօբաթ թագաւորին—Քիմեռ Օշափի սպանելու մասին: Երբ որ փոքր ինչ ընտելացաւ օդային արշաւանքներին և սովորեց Պեգասի հետ վարւել այնպէս, որ նա իր տիրոջ ձեռքի աննշան շարժմունքից և հազիւ լսելի ձայնից հասկանում էր նրա միտքը, այն ժամանակ մրտքումը վճռեց ձեռնարկել մտադրւած վտանգաւոր քաջագործութեանը:

Եւ ահա մի առաւօտ վաղ զարթնելով՝ թեթև կերպով կսմրթեց Պեգասի ականջից, որ զարթեցնի նրան: Սրա վրայ Պեգասն իսկոյն վեր կացաւ տեղիցը և քառորդ մըղոնաչափ մի ոստիւն արաւ դէպի վեր. մի ակնթարթում պտրտեց Հելիկոնի ամբողջ գագաթը, որ ցոյց տայ տիրոջը թէ ինքը բոլորովին սթափած է, թարմ է և պատրաստ՝ ուր ուզես՝ թռչելու: Այսպէս ահա առաւել ևս թարմանալով՝ և ուրախ-ուրախ խրխնջալով եկաւ իր տիրոջ մօտ, բայց այնքան թեթև, որ կարծես ճնճղուկ լինի ոտից ոստ թռչլոտելիս:

—Չմտ լաւ ես չափ ընկնում, սիրելի Պեգաս, հիանալի են թռիչքները դ, գոչեց Բելլերոֆոնը և գուրգուրելով շփեց թևաւոր ձիու գեղեցիկ պարանոցը:—ժամանակ է կարծեմ, որ քեզ հետ գնանք մեր գործին: Այսօր ևեթ գնանք պատերազմելու Քեմեռ Օշափի հետ:

Նախաճաշելուց և խոկրենայի պաղ աղբիւրի ջրից խմելուց յետոյ՝ Պեգասն ինքը մեկնեց իր գլուխը սանձելու համար։ Մինչև Բելլերօֆօնը կըզրահաւորուէր, Թուրը կրկապէր կողքից, վահանը կրկախէր, և առհասարակ կը զինաւորուէր կռւի համար, Պեգասն անհամբերութիւնից ոտքով դոփում էր գետինը, խայտում, խաղում և ոստոստում։ Երբ որ ամեն ինչ պատրաստ էր, Բելլերօֆօնը հեծաւ ձին՝ ըստ սովորութեան՝ շեշտակի դէպի վեր պացաւ մինչև հինգ մղոնաչափ, որ բարձրից մէկ լաւ նայէ ամեն կողմ, որոշէ գնալու տեղը և դէպի նոյն կողմն ուղղէ իր թռիչքը։ Նա Պեգասի գլուխը թեքեց դէպի արևելք և սլացաւ ուղղակի դէպի Լիկիա։ Ճանապարհին նրանք հասան մի արծիւի եռևից, որ քիչ էր մնում Պեգասի ոտքի տակն ընկնէր ճխլւէր, եթէ շուտով մի կողմ չըքաշւէր. Բելլերօֆօնը կարող էր բռնել նրան, բայց չուզեցաւ ժամանակ կորցնել։ Նրանք թռչում էին թունդ մրրկի արադութեամբ, և հէնց նոյն առաւօտը տեսան Լիկիայի բարձր լեռներն ու խոր-խոր ձորերը, որոնք հազիւ էին նշմարւում իրանց պատող թանձր մառախուղի միջից։ Բելլերօֆօնը լսած էր, որ զազրելի Օշափը այդ խաւար ձորերից մէկումն էր բոյն դրել։

Երբ որ Հասան իրանց մտադրեալ տեղը, Թևաւոր ձին սկսեց իջնել դէպի ներքև, օդուտ քաղելով լեռների վրայ եղած մի քանի կտոր ամպերից, որոնք մեր ճանապահորդներին ծածկելով, անտեսանելի էին կացուցանում նրանց գետնի երեսից։ Մի խիտ ամպի վրայ կանգնած՝ Բելլերօֆօնը քիչ առաջ թեքուելով՝ կարողացաւ պարզ տրնտղել Լիկիայի լեռնային մասը և նրա մուտ Հովիտները։ Առաջ առանձին մի բան չընշմարեց. նրա տակ երկարում էին ձգւած էին չոր պառակներ և փլվլւած ապառաժներ, բայց ահա նրանց եռևից սևին են տալիս նոր այրւած տնատեղեր, սպիտակին էին տալիս շատ տեղեր կոյտ-

կոյտ ոսկորները, կարծես այս տեղերում արածող տաւարների կմախքները լինէին։

«Այս ամենը Օշափի Թողած Հետքերը պէտք է լինին, մտածեց Բելլերոֆոնը։—Բայց այդ զազրելին ինքը որտե՞ղ պէտք է լինի Թաք կացած արդեօք»։

Նա սկսեց աւելի ուշի ուշով նայել լեռների մէջ սւիին տուող ձերպերը, խոռոչներն ու անտառները, բայց ուր որ նայում է, ամեն կողմ տեսնում է մեռելութիւն, չոր անապատ. մի՛այն մի քարայրից դուրս է բղխում երեք զօլ սև ծուխ, և կեռումեռ գալարուելով օձի պէս՝ սողում է դէպի վեր, և դեռ լեռան գագաթին չրհասած՝ սև ծուխի այդ երեք զօլերը միանում են և դառնում մի կէնդ սիւն։ Քարայրը զբտնըւում էր ուղիղ իրանց ոտքի տակին, միայն մի հազար ոտնաչափ հեռաւորութեան վրայ։ Գարշահոտ և Թանձր ծծմբայինն ծուխը արդէն հասնում էր մինչև Պեդասի ու Բելլերոֆոնի ռունդները։ Պեդասը փռընչում էր դղուանքից և գլուխը այս ու այն կողմ Թեքում. այդ օրի դաւակին, որ սովոր էր ծծել միայն լեռնագագաթների մաքուր օդը, զարշելի էր Թւում երկրային հոտը։ Իսկ Բելլերոֆոնը ժնդռնում էր ու փուշտում խեղդւելով այդ ծանր և հեղձուցիչ ծծմբայինն հոտից։ Զայրացած Պեդասը սաստիկ Թափ տուաւ Թևերը և մղոն ու կէս յետ Թռաւ այդ գարշահոտ տեղից։

Բայց Բելլերոֆոնը յանկարծ յետ մտիկ տուաւ և մի այնպիսի բան ընկաւ աչքովը, որ իսկոյն սանձը դրդեց և յետ շրջեց ձիու գլուխը։ Պեդասն այս նշանից իսկոյն իմացաւ տիրոջ միտքը և սկսեց կամաց-կամաց ցած իջնել մինչև մօտեցաւ նոյն քարայրին, որտեղից որ դուրս էր գալիս երեք զօլ ծուխը։ Եւ ի՜նչ տեսնի այնտեղ Բելլերոֆոնը։—Մի տարօրինակ դէղ՝ իրար վրայ կուտակուած հրբէշների։

Հրէշի իրար վրայ բսած մարմինները միմեանց այն-

քան մօտիկ էին ընկած՝ որ միայն գլխներուցը կարելի էր ճանաչել, թէ ինչ կենդանիք են նրանք։ Թուով երեք էին նրանք՝ մի ահռելի վիշապ—օձ, մի ահարկու զօրեղ առիւծ և մի դարշելի այծ։ Այծն ու առիւծը քնած էին, իսկ օձը՝ ոչ. նա իր կարմիր աչքերը չրռել էր Բելլերօֆօնի վրայ։ Բայց զարմանալին այս էր, որ գարշահոտ սև ծուխը ոչ մի րոպէ չէր կտրւում, այլ անընդհատ դուրս էր գալիս երեքի էլ ռունդներից։ Այս տեսակ մի հրէշի տեսիլը այնքան նոր և անակնկալ էր Բելլերօֆօնի համար, որ նա իսկոյն ևեթ գլխի ընկաւ, որ նա լինքն էր Փիմեռ— Օշափը և այդ էր նրա որջը։ Առիւծը, օձը և այծը մի և նոյն սարսափելի հրէշի լրացուցիչ մասերն էին։ Ջրզուելի Օշափ...

Կիսամրափ Օշափը (որովհետև նրա միայն երկու գլխներն էին մրափած) իր ճանկերից բայ չէր թողում նոր որսած զոհի արիւնոտ մնացորդները. բայց ինչ բանի մրնացորդներ էին, լաւ չէր նշմարւում. դառնի մնացորդ էին արդեօք, թէ... ուզում էի ասել՝ մի փոքրիկ երեխայի... բայց ո՞վ գիտէ, գուցէ հէնց այսպէս էլ լինէր, թէև այսպէս մտածելը սարսափ է բերում մեզ վրայ։ Երևում էր, նոր էր վերջացրել իր ընթրիքը։

Բելլերօֆօնը վերջապէս ուշքի եկաւ և գլխի ընկաւ, թէ ինչ բան է իր տեսածը։ Պեգասն աւելի շուտ իմացաւ բանի էութիւնը, և մի այնպիսի ահեղագոչ վրնջիւն բարձրացրեց, որ սար ու ձոր դրմբդրմբաց։ Սրա վրայ մրբափած գլխներն էլ զարթեցան և երեքն ի միասին կրակի ահեղ ալիքներ վիժեցին։ Բելլերօֆօնը դեռ իր պատրաստութիւնը չէր տեսել կռւի համար, որ հրէշը դուրս պրծաւ իր որջից և իր թանթուրների ահագին ճիրաններն արձակելով՝ վրայ վազեց ուղղակի խիզախ երիտասարդի վրայ՝ աւազ ու հող բարձրացնելով իր սոսկալի երկար պոչովը։ Եթէ Պեգասը թեթևաշարժ չըլինէր թռչնի պէս,

Հրէշն իր այդ յանկարծական յարձակմունքով կուլ կրտար երկուսին էլ և դրանով կրվերջանար կռիւը՝ առանց սկըսւելու։ Բայց անկարելի էր Թևաւոր ձիուն անզգայշ և անպատրաստ դտնել։

Մի ակնթարթում Պեգասն ու իր Հեծեալը սաւառնում էին արդէն բարձր երկնքում։ Բարկութիւնից խռըմփում էր Պեգասը և բոլոր մարմնով դողում էր, ի հարկէ ոչ երկիւղից, այլ եռազլխեան գարշելի սողունից զզւելով։

Օշափի կատաղութեանն էլ չափ չկար։ Նա ձգւել էր իր բոլոր երկարութեամբ, և կռնթնելով իր օձալին պոչի վրայ, ճիրանաւոր թանթուլները օդի մէջ այս ու այն կողմ էր յածում և յետ ձգելով իր երեքին գլխները՝ կրակի հեղեղ էր վիժում դէպի վեր, որ այրէ Պեգասին և նրա Հեծեալին։ Ողորմած Աստուած, ինչպէս մռնչում էր, ինչպէս վրսոում ու մկրկում։ Մինչ այս մինչ այն, Բելլերօֆօնը ձախ ձեռքն առաւ վահանը և աջով թուրը հանեց պատենից։

—Չմպա, քեզ տեսնեմ, Պեգաս ջան, շըշնջայ նա Թևաւոր ձիու. ականջին,—լնձ չամաչեցնես. օդնէր ինձ՝ որ չքացնենք այս երկրայինն հրէշը, եթէ ոչ՝ դու կըթռչես դէպի Հելիկոն առանց յետ նայելու և առանց քո մտերիմ բարերկամիդ։ Կամ կրկորճանի Օշափը, կամ նրա բոլոր երեք ըռեխները կրլափեն ինձ մի քանի րոպէի մէջ։

Պեգասը սիրով վրնջայ, և դլուխը թեքելով՝ իր վարդագոյն ռունգները տիրոջ թշերին քսեց։ Սրանով ուզեց ասել նա, որ թէպէտ ինքը թևեր ունի և մինչև այսօր անմահ է եղել, բայց այսու ամենայնիւ աւելի յօժար կը լինի ինքը մեռնել, քան թէ թոյլ կրտայ, որ Բելլերօֆօնն ընկնի հրէշի ճանկը։

—Չնորհակալ եմ քեզանից, Հոդեակս, ասաց Բելլերօֆօնը, պարդ իմանալով իր բարեկամի համր խօսակցութիւնը։—Չիմա եկ յարձակուինք Օշափի վրայ. դու վրայ թռիր, ինչպէս դիտես...

Այս խօսքերով նա շարժեց սանձը. Պեգասը նետի պէս սլացաւ ուղղակի դէպի եռագլուխ Քիմեռը, որ բոլոր ժամանակ գալարուելով՝ ձգտում էր դէպի նրանց: Բելլերօֆոնը հասնելն ու թրով զարկելը մէկ արաւ. նա միայն մէկ անգամ զարկեց ինչքան որ կռնումն ուժ ունէր. բայց Պեգասը նրան այնպէս շուտ թռցրեց դէպի երկինք, որ էլ հնար չունեցաւ նայելու, թէ հարուածը չաջողդ էր արդեօք, թէ՞ ոչ: Պեգասի օգային արշաւանքը երկար չըտևեց. նա կրկնեց իր չարձակմունքը: Այս անգամ միայն համոզուեց Բելլերօֆոնը, որ առաջին զարկով թռցրել էր Հրէշի այծային գլուխը, որ արդէն մի բարակ մորթով կախուած՝ ճօճում էր Հրէշի վրայ:

Բայց հէնց սրա համար էլ ողջ մնացած երկու գլուխները՝ օձինն ու առիւծինը՝ կրկնապատկեցին իրանց կատաղութիւնը և Հիգն էին թափում, որ իրանց երրորդ գլխի վրէժն առնեն: Նրանց ահեղագոչ մռնչիւնից և վրսոցից մարդու ականջ էր խլանում:

—Զրվախենանա, Պեգաս, աղաղակից Բելլերօֆոնը. էլի մէկ հարուած, և մենք կրկարենք երկրորդ գլուխը: Յառաջ, բարեկամ, սիրտդ պինդ պահիր...

Նա կրկին շարժեց սանձը: Թևաւոր ձին նորից սլացաւ նետի պէս դէպի վայր, և Բելլերօֆոնը իր բոլոր ուժով նորից հասցրեց թուրը ողջ մնացած գլիններին: Բայց այս անգամ թէ նրան և թէ Պեգասին ձրի չընստեց այդ: Օշափն իր թանթուլների ճանկերով մի քիչ չանգռեց Պեգասի ձախ թևը և բաւական խոր վիրաւորեց Բելլերօֆոնի ուսը: Բայց Բելլերօֆոնն էլ վոքը հարուած չէր տրել: Այս անգամ նա կտրել էր Հրէշի առիւծային գլուխը, որ արդէն կախ էր ընկել վրան և ըռեխը բաց ու խուփ անելով՝ թանձր ծուխ էր դուրս վիժում: Միայն սոսկալի դարձաւ այժմ Օշափի ողջ մնացած միակ օձային գլուխը: Նա հիմա հրահեղեղ էր դուրս վիժում և մինչև հինգ հա-

ըիւր գրկաչափ հեռաւորութեան հասցնում։ Եւ սկսեց այնքան ահեղ գոռիւնով օձնալ, վնգրստալ, սուլել ու վրսոալ, որ Յօբաթ թագաւորը լսեց այդ դոչիւնը հինգհարիւր մղոնաչափ հեռաւորութիւնից և երկիւղից սկսեց այնպէս դողդողալ, որ գահն իր տակին սկսեց երերալ և տատանել։

«Վայն եկել մեզ տարել է, ասաց նա.—այս Օշափի ձայնն է, նա երևի գալիս է մեզ լափելու»։

Այս միջոցին Պեգասը մի կողմ թռչելով՝ սկսեց բարկութիւնից վրնջալ, իսկ նրա աչքերը կայծեր էին ցայտում։

—Պեգա՛ս, վիրաւորուա՛ծ ես,—բացագանչեց Բելերոֆոնը, նկատելով, որ իր սիրական ձիու արծաթափայլ թևից արիւն է հոսում։—Նզովեալ Օշափը իր այս չարագործութեան համար իր վերջին դլուխը պէտք է տայ ենձ. ի՜նչպէս. նա համարձակի՞ վիրաւորել հրեղէն և անմահ ձիո՜ւն...

Պեգասն էլ այդ էր ուզում. նա մի ակնթարթում շրջեց դլուխը և կայծակի արագութեամբ սլացաւ դէպի ցած։ Քեմեռը կատաղութիւնից կաս կարմիր կտրած, մէկ դալարում, կծկւում էր քարայրի արիւնաթաթախ աւազի վրայ, մէկ ձդտում ցցւում էր սիւնի պէս և կրճտում բաց բերէքը։ Իսկ այդ գարշելու բուէին էլ այնքան մեծ էր, որ Պեգասն իր տիրոջ հետ միասին, առանց իր երկար թևերը ծալելու, կարող էր ներս թռչել նրա միջով և անցնել կոկորդովը դէպի նրա անյատակ որկորը։

Երբ որ նկատեց հրէշը, որ իր թշնամին յարձակւելու վրայ է, սկսեց բառանչել և գետաչափ հրահեղեղ վիժել, որով խանձխնձեց Պեգասի քնքոյշ թևերը և Բելերոֆոնի բոլոր ձախ կողմի ոսկեմազ դանդուրները։ Բայց սրանով դեռ չանցաւ վտանգը։

Առաջ թոյլ տուաւ, որ թևաւոր ձին իր հեծեալով մի քիչ երանից մօտենայ, ու յետոյ՝ մի յանկարծական ոստիւնով ընկաւ Պեգասի գաւակը և իր բոլոր անճոռնի կազմուած-

քով կալաւ նրանից ու սկսեց իր ճապուկ ու չղայլին պո-
չը չբւանի պէս բոլորիշուրջ վաթաթել Պեգասին: Այս
դարշելի բեռնով բարձաւած՝ ձին և ձիաւորը թռան դէ-
պի վեր և վեր. նրանց ներքևում պսպղում էին արդէն
լեռներն ու ամպերը, բայց նրանք էլի շարունակում էին
իրանց թռիչքը: Օշափը նրանցից չէր գջլւում և աւելի
խոր էր ցրցում իր գարշելի ճիրանները խեղճ Պեգասի մէջ-
քին: Այս միջոցին Բելլերօֆոնը շրջւեց և իր կուրծքն ու
երեսի կէսը վահանով պատսպարելով՝ աչքն անակնթարթ
ձգեց հրէշի աչքը: Մարդկային աչքի հայեացքը կարող
չէր տանել Օշափը. նա խփեց իր աչքերը և առաջի թան-
թռուլները մեկնեց, որ վահանի վրայից բռնէ Բելլերօֆոնի
դլուխը, բայց՝ բաց արաւ իր կուրծքը և Բելլերօֆոնը ներս
ցրցեց իր սուրը նրա կուրծքի մէջ մինչև կոթը: Չէնց որ
այս մահացու վէրքն ստացաւ Օշափը, նրա պոչն արձակ-
ւեցաւ, և դարշելի հրէշը իր բոլոր թեւիամորթ ջամպա-
քով վայր կորճանւելով՝ ընկաւ մի բարձր ժայռի վրայ. նը-
րա փորոտիքից մի նոր կրակ բորբոքւեցաւ և Քեմեռի բո-
լոր մարմինն սկսեց այրւիլ: Երկրի վրայից՝ արևի մայր
մտնելուց յետոյ՝ շատ մարդիկ նայեցան և տեսան, որ եր-
կընքից գալարւելով՝ ներքև է թռչում մի կունդուկծիկ ե-
ղած ահռելի հրեղէն բան՝ երկար պոչով, շատ վախեցան,
և կարծեցին, թէ դուցէ մի օդերևոյթ կրլինի և կամ պո-
չաւոր աստղ: Բայց մէս օրը՝ վաղ առաւօտուն՝ մի քանի
երկրագործ գնացին աշխատելու իրանց ագարակում և այն-
տեղ սարսափելով տեսան, որ իրանց բոլոր արտերը սև
մոխրով են ծածկւել, իսկ արտերի մէջ տեղը ոսկորների մի
կոյտ կայ, մեծութեամբ մի ահագին դէղի չափ: Այդ օր-
ւանից մինչև օրս ոչ մի մարդ այլ և այ տեսած չէ Օշափին:

Այս փայլուն և փառաւոր յաղթանակը տանելուց յե-
տոյ՝ Բելլերօֆոնը քնքոյշ սիրով համբուրեց Պեգասի դը-
լուխը: Ուրախութիւնից նրա աչքերը ջրակալեցին:

— Յետ գնանք, սիրելիդ իմ, ասաց նա,—գնանք Պիրենայի աղբիւրը։ Ընորհակալ եմ կատարած քաջագործութեանդ համար։

Պեգասը՝ օդի մէջ ծածանելով՝ սկսեց թռչավարել, և մի քանի րոպէ հաղիւ անցած՝ նա արդէն մեղ ծանօթ Պիրենայի աղբիւրի ափին էր։ Այնտեղ ամեն ինչ մնացել էր անփոփոխ.—յիշողութիւնը կորցրած ծերունին եկաւ վայրի պտուղներով. տաւարած գիւղացին կովերը բերաւ ջուր տալու. ջահիլ աղջիկը՝ կուժն ուսին՝ եկաւ ջրի։

—Հիմա է միտս գալիս, ասաց ծերունին, նայելով Պեգասի վրայ, որ այս թռչաւորը ձին ես տեսել եմ մէկ անգամ երեխայ ժամանակս։ Բայց այն ժամանակները սա տասը հազար անգամ աւելի գեղեցիկ էր, քան թէ հիմա։

—Սրա նման երեք հատը ես ուրախութեամբ կըփոխէի մի հատ բեռնակիր ձիու հետ,—ասաց կովարածը։—Այս թռչաւոր ձին եթէ իմս լինէր, ես նախ և առաջ արմատից կըխուղէի սրա թևերը։

Իսկ ջահիլ աղջիկը ոչինչ չասաց. նա միշտ վախենում էր անտեղի, հիմա էլ նոյնպէս։ Նա Պեգասին տեսաւ թէ չէ՝ յետ փախաւ դէպի տուն։ Վազելիս էլ ոտքը սահեց, կուժը վայր ձգեց կոտրեց։

—Հապա ո՞ւր է մեր դանդուրիկ տղան, հարցրեց Բելլերոֆոնը, ձին մօտ քշելով դէպի գիւղացիները։—Նա իմ մշտական ընկերս էր այստեղ. նա հաստատ հաւատացած էր, որ Պեգասը կըգայ, և միշտ նայում էր ջրին՝ սպասելով նրա գալուն։

—Ես այստեղ եմ, սիրելի Բելլերոֆոն — կամացուկ կանչեց տղան։

Այս աշխոյժ և կայտառ երեխան օրերով սպասել էր Պիրենայի աղբիւրի մօտ, յուսալով, թէ ահա ուր որ է՝ կըգայ իր բարեկամը. բայց հէնց որ տեսաւ Բելլերոֆոնին Պեգասի վրայ նստած ամպերից վայր է իջնում դէպի աղ-

բիւրը, նա թաք կացաւ թուփերի մէջ, որ ալևորն ու տաւարածը չըտեսնեն նրա ուրախութեան արտասուքը։

—Դու տարար յաղթուեթիւնը, բացագանչեց նա, վազելով Բելլերոփոնի մօտ, որ դեռ նստած էր Պեգասի վրայ։—Ես հաւատացած էի, որ դու կըյաղթես անպատճառ։

—Այո՛, մանկիկս, ես յաղթեցի Քեմեռ Օշափին,—պատասխանեց Բելլերոփոնը։—Բայց եթէ քո հաւատալըդ չըլինէր, ես երբէք չէի սպասիլ Պեգասին, երբէք չէի թըռչիլ ամպերում և երբէք չէի վերացնիլ Օշափին։ Այս բոլորի համար ես միայն քեզ եմ պարտական։ Բայց թողնենք այժմ Պեգասին և ազատութիւն տանք իրան. թող երթայ իր համար, ինչպէս եղել է միշտ։

Այս ասելով՝ Բելլերոփոնը աղօթած տանձը վեր առաւ Պեգասի գլխից։

—Գնա՛, իմ Պեգաս, դու այժմ ազատ ես միշտ և յաւիտեան, ասաց նա տխուր ձայնով։

Արծաթափայլ թևերով ձին գլուխը դրեց իր տիրոջ ուսին և չըշարժուեց տեղիցը։

—Դու չե՞ս ուզում ինձանից հեռանալ,—հարցրեց Բելլերոփոնը, շփելով նրա վիզը.—ուրեմն կա՛ց, որքան ժամանակ որ կամենաս։ Հիմա գնանք ուրեմն Յօբաթ թագաւորի մօտ՝ նրան աչքալոյս, որ Քեմեռ Օշափին այլ ևս գոյութիւն չունի։

Բելլերոփոնը համբուրեց գանգուրվիկ տղային, նրան մնաս բարով ասաց, խօսք տըւաւ, որ էլի շուտ յետ կըդառնայ, և գնաց։

Անցան շատ և շատ տարիներ. գանգուրվիկ տղան մեծացաւ և սկսեց թռչիլ ամպերից վերև, աւելի և աւելի բարձր, քան թէ Բելլերոփոնը, և իր յաղթուեթիւնների համար աւելի մեծ փառքի հասաւ, քան թէ Օշափի յաղթողը։

Այս փոքրիկ տղան դառաւ մե՛ծ բանաստեղծ...*

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

* Այս պատմական հէքիաթը անգլիերէնից թարգմանել է շնորհալի տիկին Սիսօեվան—ռուսաց „Родникъ“ ամսագրի խմբագրուհին—և տպագրել է իր ամսագրի 12 №-ում 1885 թ., որտեղից և մենք թարգմանեցինք։ Ղ. Ա.

ՓՈՔՐԻԿ ՍԻՐԱԿԻՑՆԵՐ.

ՁՄԵՌՆ

Այրիկ, ուր է ծիծեռնակը,
Որ անդադար երգում էր
Եւ մեր այս տան կորի տակը
Իւր բոյնն մտնում ելնում էր։

Այրիկ, վաղուց էլ չեմ լսում
Թռչունների երգի ձայն.
Ինչի՞ նոքա էլ չեն երգում
Չեն թռչկոտում խառնաձայն։

Երկայնավիզ, երկայնկտուց
Սրագիլն էլ չեմ տեսնում.
Նորա ձայնը ես շատ վաղուց
Է որ բնաւ չեմ լսում։

—Այո՛, որդեակ, ասաց մայրն,
Դու չես տեսնիլ ծիծեռնակ,
Դու չես տեսնիլ նրբա եղբայրն
Ձատաղրուգիկըն սարեակ։

Ճահիճների վրայ ճեմող
Սրագիլն էլ չես տեսնիլ.
Եւ խուռներամ ճրւճրւացող
Թռչնոց ձայնը չես լսիլ։

Որովհետ գարունն անցաւ
Վարդն ու ծաղիկն էլ հետը.
Որովհետև ամառն անցաւ
Ջերմ արեգակն էլ հետը։

Աշնան հետը դաշտի բարիք
Դէպի տուն ենք ներս բերում.
Կանաչ արտեր, սիրուն այգիք
Կանաչազուրկ են մնում։

Ձրկայ ծաղիկ, չրկայ գալար,
Դաշտերն խոզան են դարձել,
Սառն եղեամն անգթաբար
Ամեն բան է սառցրել։

Սոխակըն՝ որ կեանք է սիրում,
Ցիծառի հետ միացաւ.
Չուզեց մնալ նա մեր երկրում,
Սարեակի հետ հեռացաւ։

Արագիլն էլ ոտքի ելաւ,
Երամ կազմեց խմբովին.
Չարժեց թևերն ու վեր թռաւ,
Որ հասնէ մեր սոխակին։

Գարունն՝ ամռան աւետաբեր
Թռչուն, կանաչ մեզ բերեց.
Աշունն ձմռան վատ բօթաբեր՝
Դոցա մեզնից հեռացրեց։

Մեզնից գնացող թռչունները
Մեռելութիւն չեն սիրում.
Բայց տեսնում ես բնութիւնը
Ձիւնի տակ է խոր նիրհում։

Դէ, շուտ արա, դուռը յետ դիր,
Վառարանին մօտ նստենք,
Ցուրտ է, ցուրտ է, լաւ իմացիր,
Ցուրտ ձմեռայ մէջըն ենք։

ՀԱՍՕ.

ՀԱԳԱՐ ԵՒ ԻՄՄԱՅԷԼ

Խաղէմ դիշերը աչք-ունքը կլուսած տարածել էր իր սևաթոյր թևերը Հարթ, աւազուտ անապատի վրայ։ Մութ-կապոյտ երկնքի միայն բարձր կէտն էր երևում իր աղօտ, առկայծեալ կանթեղներով. իսկ Հորիզոնը մթութեան մէջ էր ընկղմըւած։ Մեռելութիւն էր տիրում այդ միապաղաղ տափարակի վրայ. ձայն-ձուն չկար. անշարժ էր աւազի ծովը.—ոչ քամին էր ուժգին շառաչում, թումբեր կազմում, մարդ, անասուն տակը թողնում և ոչ շնչաւոր արարածներն էին իրանց երթևեկութեամբ լռութիւնը խանգարում. բայց մի վայրկեան ևս՝ և ահա ամայի անապատը դղրդաց, շարժւեց տեղից. անցաւ մի վայրկեան ևս, կրկընւեց նոյն դղրդոցը աւելի հուժկու և սարսափեցուցիչ կերպով և տարածւեց ամբողջ Հարթութեան վրայ, տիրած խաղաղութիւնը վրդովելով։

Կենդանիների թագաւորն էր, որ իր մռնչիւնով սարսափահար արաւ. նա՝ կլղող արևից թաքնըւած՝ ամբողջ օրը մրափած էր իր որջում, այժմ դուրս է եկել իր ստորադրեալներին աչք ածելու։ Նա ազդարարութիւն է կարդում բոլոր կենդանիներին. «Ով ականջ ունի, թող լսի, պաշտպանւեցէք, քաշւեցէք շուտափոյթ, ապա թէ ոչ՝ յետ մնացողները զոհ կըզնան իմ թաթի Հարուածին»։

Սարսափահար ազդարարութիւնը տարածւեց մի ակն-

թարթում և բոլոր կենդանիները փշաքաղած ու զարհուրած յետ-յետ փախան իրանց որջերը. բայց ովքե՞ր էին այն երկու խօսուն արարածները՝ անապատի մէջ մոլորուած. մի՛թէ նրանք չըլսեցին և չե՞ն սարսափում ահեղաղաղ մռնչիւնից և մի՛թէ չի տարաճուում գազանների թագաւորի հրամանը և բանաւորների վրայ:

Մայր ու որդի են այդ երկուսը. մթութեան մէջ մոլորուած խարխափելով դէս-դէն են գնում. այո՛, նրանք լսեցին հզօր ազդարարութիւնը, զարզանդեցան, սարսուռ անցաւ նրանց մարմնով և քիչ էր մնում երեսներն ի վայր դետնին ընկնէին, բայց նրանք յետ-յետ չեն փախչում, որովհետև չըգիտեն որտեղից են գալիս. նրանք խոնջացած քայլերով գնում են աջ ու ձախ, առանց իմանալու, թէ ուր են գնում:

«Պարձեալ այն սարսափելի ձայնը, ինչ որ մի քիչ առաջ լսեցինք. ո՛ւհ, մայրիկ, սարսուռ է ողջ մարմինս... նա մի զարհուրելի կենդանու ձայն է. բայց նրա մռընչիւնը մօտենում է... կարծես դէպի մեզ է գալիս... ո՛ւհ, մայրիկ, էլ չեմ կարողանում քայլել...» Եւ շունչը կտրած, մօր փէշից կպած՝ էլ չըկարողացաւ խօսել և փոքրիկ, անզօր ոտերը աւազի միջից դուրս քաշել:

— Ոչինչ չըկայ, մի վախեցար, որդեակս. եկ, եկ, շալակս առնեմ, վաստակել ես. ասաց մայրը և իր միակ աչքի լոյս որդուն՝ ահ ու դողի մէջ ընկած՝ շալակն առաւ:

Համբերատար մայրը՝ իր թանգագին շալակը կռնակին՝ շտապում էր, ինքն էլ չըգիտէր՝ դէպի ուր: Նա գնում էր յետ ու առաջ, աջ ու ձախ նայելով, բայց ոչինչ չէր տեսնում. նա աչքով կարծես փնտռում էր առիւծին և մի կերպ ուզում էր վտանգից ազատել իր սիրասուն մանուկը:

Մռնչիւն... վեր թռաւ դորովագութ մայրը, սրտի

բաբախը սաստկացաւ, ոտերը թուլացան, ամբողջ մարմինը սառը քրտինքով ծածկուեց և «վա՛յ իմ երեխա՛ս» ասելով, վայր ընկաւ։ Խելքը դեռ գլխին էր. նա մտածում էր. «Վա՛յ, գալիս է առիւծը... մօտեցաւ... երեխաս քնած է, աւազի տակ ծածկեմ, թո՛ղ ես արտաքսուածս միայն անկըշտում գազանի փորին կուլ գնամ, միայն իմ սիրելի որդին նրա ճիրաններից ազատւի...» Բայց նրա ձեռքերում ոյժ չըկար. նա փխրուն, սառն աւազը չըկարողացաւ դէս-դէն անել, մնաց նըւաղած, ձեռքն աւազի մէջ խրած։

Պարձեալ մռնչո՛ւն... բայց այս անգամ փոխանակ հագարին սարսափեցնելու և աւելի ու աւելի ուժասպառ անելու, մի քիչ ոյժ տւաւ. նա սրտապնդեց՝ ինքն իրան սիրտ տալով. «Առիւծը հեռացաւ. ձայնը հեռւից է գալիս. նրա հակառակ կողմը գնում։» Ծալապատիկ նստած տղին համբուրում և գանգուր մազերն էր փայփայում ուրախացած.

«Բայց չըպէտք է ուշացնել, պէտք է հեռանալ» ասելով՝ որդուն կռնակն առաւ, գնաց։

Բաւականին ճանապարհ կտրեց նա կարճ ժամանակամիջոցում, բայց վերջը տեսաւ էլ ոտերումն ոյժ չի մնացել, ինքն իրան հարց տւաւ՝ կարծես խելքի գալով՝ «Ո՞ւր եմ գնում»։ Կանգնեց. շալակից առաւ զգուշութեամբ իր քնած մանուկը, առաւ և պաշարը և տակի մէջ տաքացած ջուրը, նստեց։ Ի զուր էր աչքերին ոյժ տալիս. նա ոչինչ չէր տեսնում, բացի իր գլխի վերև մութ կապոյտ երկնակամարը իր աղօտ աստղերով, խոր յոգոց քաշեց ասելով. «Արտաքսեցայ տանից մի չնչին պատճառով. Աբրահամը ինձ սիրում էր՝ երբ իր օրինաւոր կնոջից որդի չունէր. ա՛խ, երբ նրա խահակը ծնուեց, էլ կորաւ իմ նշանակութիւնը, կորաւ և ինձանից ծնածի—իմ թանգագին իսմայէլի նշանակութիւնը։ Բայց ես Աբրահամից չէի սպա-

սում. Նա բարի, ողորմած է։ Ի՜հ, թող նա ասլբի ծերուԹեան օրում անվրդով. էլ Սառան իր անվերջ գանգատներով խեղճ ծերունուն անհանգիստ չի անիլ։ Բայց անյածն անցած է, հարկ էլ չըկայ դրանց մասին խօսել. այժմ ես հանապարհը կորցրել եմ. մուԹն է, ոչինչ չի երևում. այս գիշեր այստեղ անցկացնեմ, առաւօտը լուսաբացին շարունակեմ հանապարհս. բայց եԹէ չըկարողանամ հանապարհը գտնել, ահա Աբրահամի տւած պաշարն ու ջուրը հատել է... Ա՜խ, եԹէ գարձեալ մոլորվինք և շուտով տեղ չըհասնենք, իմ Իսմայէլն ինչ պիտի ուտի ու խմի»։

Այս մտածմունքի մէջ՝ քունը ծանրացաւ նրա աչքերին և պինդ-պինդ գրկելով իր Թխադէմ, գանգրահեր տղին՝ քնեց։

Արևը նոր էր ճաճանչել, երբ եգիպտացի Հագարը տղին գարԹնցրեց և ձեռը բռնելով շարունակեց հանապարհը։ Արևի ճառագայԹները սաստկանում էին. աւազը տաքանում էր, բայց նրանք անդադրում քայլում էին։ Կէս օրայ ժամը հասաւ. կրակ էր Թափում վերևից արևը. կրակ էր կտրել հատիկ-հատիկ աւազը. այրւում էր Իսմայէլի ոտերը. անդադար չետ էր մնում. վերջապէս էլ չըկարողացաւ առաջ գնալ, ուժասպառ ընկաւ դետին։ Տկի մէջ եփ եկած ջուրը, որ մի խմելու էր մնացել, ծարաւից տապակւած մայրը, իրան գրկելով՝ որդուն տւաւ, բայց այդ ջուրը նրա ծարաւը չըկոտրեց։

Հագարը շալակն առաւ որդուն մորմոքւած սրտով և գարձեալ շարունակեց իր անվերջ հանապարհը։ Յոգոց էր հանում մայրը ամեն անգամ՝ երբ ազանձւած բերանով հազիւ հազ արտասանում էր որդին. «Մայրիկ, ծարաւ եմ»։

«Ջուր չըկայ, ինչ անեմ, ինչ մոխիր տամ գլխիս,

բայց որդիս թուլանում է, էլ ձայնձուն չեմ լսում. շունչ չըկա՛յ... վա՛յ, մի՛թե նա... խօսքը չըկարողացաւ վերջացնել, շտապով շալակից առաւ որդուն և ձայն տուաւ. «Իսմայէ՛լ, Իսմայէ՛լ», իսկ նա միայն շարժւեց և թխուած շրթունքները հազիւ հազ կարողացաւ շարժել: Մօր աչքերում արտասուք չէր երևում, չորացել էր, նրա սիրտն էր մորմոքում:

«Աչքիս առաջ չըտեսնեմ որդուս մահը. հեռացնեմ սրան... սա մեռնում է... բաղդաւոր եմ, որ իմ վախճանը և՛ս հեռու չէ: Գնա՛, որդի՛, մեզ վիճակւած չէ էլ ապրել այս արևսարհում. քեզ միայնակ չեմ թողնի՛լ«... ասաց և դողդոջ ձեռքերով գրկեց որդուն, ջերմաջերմ համբոյր տալով թողեց և մի վտաւանի հեռաւորութեամբ հեռացաւ:

«Ի՞նչ եմ ասում ես, որդուս թողնե՞մ միայնակ այնտեղ: Ո՛չ, ո՛չ, թո՛ղ նա իմ աչքիս առաջը մեռնի. բայց ո՛չ, ես կըգրկեմ նրան և երկուսս միասին կըմեռնե՛նք»... ասելով վազեց գլխապատառ դէպի որդին և գրկեց նրան:

«Ո՛հ, սա մեռնում է... ես դեռ կենդանի եմ և գուցէ դեռ շատ ապրի՛մ... չէ, չեմ կարող իմ ջուխտ կուրացած աչքերովս տեսնել քեզ, իմ սիրուն Իսմայէլ». ասելով կրկին դրաւ աւազի վրայ և խելացնորի պէս վրան ընկաւ, համբուրեց, լըզեց և ապա կուրծքն ու գլուխը ջուխտ ձեռքերով ծեծելով՝ հեռացաւ:

Կանգնած է հազարը անշարժ, արձանացած և անթարթ նայում է որդու անշարժ մարմնին: Նա կարծես էլ չի ապրում, էլ չի շնչում և ոչինչ չի տեսնում, բայց միայն որդուն:

Այս պահին էր, որ Հագարի ականջովն ընկաւ. «Հագար, Հագար, աչքդ պարձուր Հակառակ կողմդ, մի՛ յուսահատիր, ա՛ռ շալակդ որդուդ, այնտեղ կըգտնես և՛ ջուր, և՛ հով տեղ. որդիդ մեռած չէ: Աստուած լսեց մանուկի ձայնը»:

Այլայլեցաւ Հագարն սկզբում, բայց յետոյ ուշքի գալով, նայեց և պալար նշմարեց Հակառակ կողմում: Շտապեց, գիրկն առաւ որդուն և ուրախ-ուրախ վազեց դէպի կենսատու, փրկարար ջուրը:

ՄԵԼԻՔ

Բառու.

ԲՈԼՈՐ ՄԱՐԴԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՆ

(Պլեշչեևից)

Երբեմն ուրախ և երջանիկ մեզ կըժպտար այս աշխարհ,
Թէ որ բոլոր մարդիկ անկեղծ սէր տածէին դէպ իրար,
Թէ հարևանն հարևանին ձեռք մեկնելով օգնութեան՝
Ասէր. «Ձէ որ մենք եղբայր ենք, տուր ինձ ձեռքդ, եղբայր ջան»։

Եւ ինչու մենք չենք հալածում քէնն ու ոխը մեր սրտից,
Եւ չենք կազմում մի դերդաստան օրհնաբանուած Արարչից.
Ինչու մեզնից ամեն մէկը քաղցրը ժպտով ընկերին
Չի ասում. «Ե՛կ, մենք եղբայր ենք, ես դու ինձ մօտ, իմ անգին»։

«Դու հարուստ ես և միշտ դուքաած — կեանք ես վարում երջանիկ,
Իսկ ես աղքատ և միշտ քաղցած — անգամ չունիմ հագնելիք.
Բայց երկուսիս կրծքի մէջ էլ անկեղծ սիրտ է բաբախում
Ուրեմն մենք եղբայրներ ենք, էլ ուր ես ինձ անարդում։

«Դու ատում ես խարդախութիւն, ուստն հալածում չարաչար,
Եւ վեհ խօսքը ճշմարտութեան սուրը քարող է քեզ համար.
Ես էլ նոյնպէս՝ ողջ հոգուս նըւիրուած եմ բարութեան.
Տուր ինձ ձեռքդ, ուրեմն մենք եղբայրներ ենք անբաժան։

«Դու չես խաբում ոչ ուժեղին, ոչ տկարին կեղեքում,
Ես էլ նոյնպէս, ինչպէս և դու, սուրբ եմ պահում իմ խոստում.
Երկուսս էլ մի աչքով ենք նայում բախտին մարդկութեան.
Այո, այո եղբայրներ ենք, տուր ինձ ձեռքդ, եղբայր ջան:

«Քեզ սիրում էր քո մայրիկը, սիրում հոգով ու սրտով.
Իսկ իմ մայրը ինձ պաշտում էր. երդւում միշտ իմ արևով.
Ի՞նչ փոյթ թէ դու մեծ իշխան ես, ես մի տկար շինական.
Չէ՞ որ իրար մենք եղբայր ենք. արի բազմենք մի սեղան:

«Մենք սիրում ենք երեկոյեան վերջալոյսը արևի,
Հայրենիքը վեր ենք դասում ողջ գանձերից աշխարհի.
Կեանքի խաչը երկուսիս էլ ճնշում է մի՛շտ, անդադար.
Ուրեմն մենք եղբայրներ ենք՝ իրաւունքով հաւասար:

«Բայց ահա մեզ, եղբայր, արդէն սպառնում է մի այլ հարած,
Խոր ծերութիւն և ապա մահ—ահա՛ վախճան մեր կենաց.
Եւ շիրիմն է այնուհետև դառնում վերջին մեր կայան.
Այո, այո, բոլոր մարդիկ եղբայրներ են անբաժան...»:

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Թիֆլիս.

ՐԷՅՆԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԱ

ԲԱՐԵՍԻՐՏ ՓԱՏԵՐԻ ԽՈՐՎԱԾՔ

Թւին, Կեօլն գերմանական քաղաքի Սուրբ Յակովբ եկեղեցու էրբերդաթ փատերը, այսինքն քահանան, որ յայտնի էր իր խստակրօն կենցաղով և բարեպաշտութիւնով, մի շաբաթ օր ուղարկեց ծառային, որ մի և նոյն ժամանակ խոհարարի պաշտօն էլ էր կատարում, քաղաքային շուկան— սպանդանոցը՝ օրւայ պարէնի պաշար դնելու համար: Մի խանութում խոհարարը կախած տեսնելով մի ընտիր կտոր միս՝ մօտեցաւ նրան այն ժամանակ, երբ նոյն խանութից ոչինչ չդնած և դայրացած՝ դուրս եկաւ նոյն ժամանակւայ քաղաքապետի ծառան, որովհետև խանութպանը խիստ թանգ էր գնահատել ընտիր մսի կտորը: Քաղաքապետը հարուստ և ամբարտաւան մի մարդ էր: Վերջինիս ծառան վերադարձաւ իր տիրոջ մօտ և թոյլտուութիւն խնդրեց, թէ արդեօք կարո՞ղ էր նա մի այնպիսի բարձր գին տալ ընտիր մսի կտորին, և երբ քաղաքապետը թոյլ տւաւ, նա շտապեց սպանդանոցը, բայց ինչքան մեծ եղաւ

իր ապշութիւնը, երբ լսացաւ, որ տէրտէրի ծառան արդէն դնել էր։ Քաղաքապետը՝ երբ այս բանն լսացաւ, սարսափելի կերպով կատաղեց և գոչեց. «Ինչպէ՞ս, այն՝ ինչ որ թանգ է քաղաքապետի համար, թանգ չէ մի խեղճ աղքատ տէրտէրի համար։ Ջատ լաւ, ես էգուց ճաշին կերթամ այդ կեղծաւորին հիւր և նրա փուչը կըբանամ, որ դրսումն իրան սուրբ է ձևացնում, իսկ տակահան այդ օրինակ շռայլութիւնները է անում»։



Կեօլնի Ս. Յակոբ եկեղեցին.

Յաջորդ կիւրակէ օրը քաղաքապետը մի քանի մարդկանց հետ ճաշի ժամին մտաւ հայր Էբերգարթի մօտ և յայտնեց, որ նրա մօտ ճաշելու են եկած — հակառակ քաղաքավարական կանոնի։ Հայր Էբերգարթը շփոթւած այսպիսի անակնկալ իրողութիւնից՝ սկսեց ներողութիւն խընդրել, որ իր ճաշը չափազանց հասարակ է և արժանի չէ այնպիսի մի բարձր հիւրի։—Ոչինչ, ասաց քաղաքապետը,

ինչ որ ձեզ համար պատրաստել են, նրանով մենք էլ գոհ կըլլինինք։

Այն ժամանակ քահանան հրաւիրեց նրանց միւս սենեակը, ուր նրանք մի կերպ տեղաւորուեցան անպաճոյճ սեղանի շուրջը։ Հայր Էբերդարթը ջերմեռանդ կերպով օրհնեց սեղանը, որ բաղկացած էր սրգանակից, նրա մէջ եփած մսից ու կանաչեղէնից. ըմպելիքն էր վճիտ աղբիւրի ջուր։ Երբ այս ամենը կերան սրճան, տիրեց լռութիւն. քաղաքապետը մի արտաքոյ կարգի բանի էր սպասում. նա մտածում էր, որ իրան ուզում են խաբեն։ Բայց երբ տանտէրն առաջարկեց նրանց վեր կենալ և գոհացողական աղօթք կատարել, քաղաքապետը պայթեց զայրացած և և դոռաց. «Կեղծաւոր և խաբեբայ, դու ուզում ես ինձ ցանել. ասա՝ ո՞ւր է այն մսի կտորի խորովածը, որ Կեօլն քաղաքի քաղաքապետի համար թանդ էր, իսկ քեզ համար՝ ոչ»։

Մի լոպէ դոյնը թռցրեց խեղճ քահանան, բայց շուտով դարձեալ ղըտրթացաւ նրա մեղմ հայեացքը և նա անդորը կերպով պատասխանեց. «Ճշմարիտ է, որ երեկ ես առել եմ մի թանգ կտոր խորովածացու, բայց այն ինձ համար չէր, և շատ կըցանկալի ես այդ հանգամանքը ծանուկ պահել, բայց այժմ իմ պատիւը պահանջում է որ յայտնըվի. խնդրում եմ ետևիցս մտէք միւս սենեակը։

Միւս բաւական ընդարձակ սեղանատանը բազմած էին տասներկու խեղճ, սովից ու տանջանքներից ընկճուած ծերունիք, որոնք ուրախ-ուրախ վայելում էին մի շատ փառաւոր ճաշ։

—Ահա տասներկու տնանկները, ասաց քահանան, որոնց ամեն կիւրակէ ես հիւրասիրում եմ՝ գոնէ մի քիչ սփոփելու համար նրանց վեցօրեայ գառն աշխատութիւնից յետոյ. այն կտոր միսը, որ ձեզ այնքան զայրացրել է, սրանց համար էր գնած։ Ձփոթուած, քաղաքապետը ասաց.

ինչպէ՞ս ես տուժ «տաճներկու», քանի որ սեղանի շուրջը նստած են տաճներեք հոգի. քահանան իրանց անուններովը համբրեց ամենին, և տաճներկու էին:

Քաղաքապետն ասաց. ոչ, տաճներեք են. դու չըհաշուեցիր նրան, որի երեսը վայլում է այնպիսի մեծահոգութեամբ և որի հեզահամբոյր նայուածքը ուղղած է մեզ վրայ: Այս խօսքերի վրայ՝ հանդիսականներին ոարսուռ տիրեց և նրանք լռութեամբ հեռացան, հասկանալով, որ նա ինքը Քրիստոսն էր, որ երևացել էր տնանկների շարքում՝ ամօթահար անելու ամբարտաւան քաղաքապետին:

Բարեպաշտ հայը էքերզարթը հասաւ խորին ծերութեան և վախճանուեց՝ սիրած և յարգուած ամենից:

ԱՄԲՐՈՍ



ՄԵԾ ՊԵՐԱՍԱՆ ԱՊԱՄԲԱՆԸ

Թիֆլիսում 1887 թվ.

Սմբուռը չորս տարի
արդուզնք էր թափում
Հայոց Թատրոնի
սպասող մուտքին...
Սմբուռը չորս տարի
Նա տխո՜ւր, տրտո՜ւմ էր
Ողբում էր վատը
իւր անցած օրերին...

Բայց ահա այսօր
Նա ոչի առած,
Նորից Թատր կապեց
իւր վիհ ճակատին.
Նա տեսաւ զարթնել
իւր ծոցում սրնեաց
Հայկական բեմի
ջերմ սիրահարին։

Տեսաւ ու խնդայց զրկեց Քեզ սիրով,
Որպէս զթոտ մայր որդուն հարազատ.
Իսկ Դու սրբեցիր նրա արտասուք,
Կէցցես յաւիտեան սանձալի՛ տաղանդ։

ԱՂԻՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Պ. Ղ. ՂԱՅԱՅԵԱՆԻՆ

Նրւէր յարգանաց.

Ի երեկոյ խաւար աստղեր
Երկնքումը յուզեցան
Եւ մի հատիկ վառ աստղի դէմ
Կատաղաբար կռւեցան։

Բայց լուսինը բակ բոլորած՝
Այս ամենը տեսնում էր,
Եւ աչքերը երկինք յառած՝
Սրտի խորքից ասում էր.

«Վնաս չունի, Թող Հալածեն
«Փայլուն աստղին երկնքից,
«Կըգայ մի օր, որ Տէր Աստուած
«Հաշիւ կուզի իրանցից». . .

Գրաշար Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ

ԵՐԿՐԻՍ ԵՒ ԻՐ ՎՐԱՅ ԵՂԱԾ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՋՐՈՅՑՆԵՐ

Երկիրս վրայ լինում են դիշեր և ցերեկ. ինչ է սրա պատճառը։ Ասացինք որ երկիրս իր վրայ թալալում է ինչպէս անիւը իր առանցքի վրայ. սրանից յառաջանում են դիշեր ու ցերեկը։ Բայց այս դեռ ևս բաւական չէ։ Հարկաւոր է գիտենալ, որ երկիրս պտտւում է միևնոյն ժամանակ արեգակի շուրջը. ահա սրանից էլ յառաջանում են տարւայ չորս եղանակները— գարուն, ամառ, աշուն և ձմեռ։ Այս ապացուցանելու համար, շատ փաստեր կարելի էր բերել, բայց կարծում եմ որ կարելի է հաւատալ առ այժմ, առանց փաստեր պահանջելու էլ։ Այսքանը կասենք միայն՝ կամ երկիրս է շրջւում արեգակի շուրջը, կամ թէ արեգակն է շրջում երկրիս շուրջը։ Ո՞րն է սրանցից աւելի հաւանականը։ Երկիրս անհամեմատ փոքր է արեգակից. սա մի գունտ է, ինչպէս են և ուրիշ շատ մոլորակներ, որոնք պտտւում են արեգակի շուրջը։ Պէտք է որ մեր երկիրն էլ բնութեան ընդհանուր օրէնքներին համաձայն՝ շրջւում լինի արեգակի շուրջը։ Այս աւելի հաւանական է, քան թէ ենթադրէինք որ արեգակն է շրջւում երկրիս շուրջը։ Երկիրս շրջւում է—այն՝ և՝ երկու կերպ,—մէկ՝ ինքն իր վրայ. սրան ասում ենք «ինքնաշրջանաւորութիւն» երկրի. մէկ էլ՝ արեգակի շուրջը. սրան էլ ասում ենք «տարեկան շրջանաւորութիւն» երկրի։ Տարեկան շրջանաւորութիւնից յառաջ են գալիս տարւայ չորս եղանակները. բայց այս

ինչպէս է լինում։ Երկիրս գնտաձև է և շրջւում է իր վրայ իբրև անիւ։ Իւրաքանչիւր անիւ ունի առանցք կամ սռնի. իհարկէ երկիրս չունի այսպիսի մի բան։ Բայց երկրիս օրական շրջառաւոթիւնը լաւ հասկացնելու համար, սովորաբար ասում ենք թէ՝ նա պտտւում է իր սռնու կամ առանցքի վրայ։ Եթէ հնար լինէր երկրագունտը ծակել և հիւսիսային ծայրից մինչև հարաւային ծայրը մի գաւազան անցկացնել այնպէս, որ միևնոյն ժամանակ անցնէր նրա կենդրօնի միջից, այդ գաւազանը կըլինէր նրա առանցքը։ Որովհետև այս անհնարին է, ուստի ելևակայում ենք կամ ենթադրում ենք մի այսպիսի մտաւոր գիծ։ Այս մտաւոր գծի մի ծայրը դարձուած է միշտ դէպի հիւսիս, իսկ միւսը՝ դէպի հարաւ։ Եթէ երկրագունտի վրայից քաշենք մի այլ գիծ ևս այնպէս, որ գտնուէր հիւսիսային և հարաւային ծայրերից հաւասար հեռաւորութեան վրայ, դա կըլինէր երկրագունտի մէջտեղովը փաթաթուած մի գօտի։ Այս գօտին բաժանում է երկրագունտս երկու հաւասար կիսի.—հիւսիսային և հարաւային։ Միևնոյն ժամանակ այս գօտին անուանւում է հասարակածային։ Ուրեմն հասարակածն այն գիծն է, որ երկիրս երկու հաւասար կիսագնտերի է բաժանում, այն է՝ հիւսիսային և հարաւային կիսագնտերի։

Երկիրս միշտ թեքւած է լինում դէպի արեգակը մերթ իր հիւսիսային և մերթ իր հարաւային ծայրով։ Այդ թեքւածը կամ հակւածը երբէք չի փոխում իր դիրքը։ Չափել իմացել են, թէ քանի աստիճան է այդ թեքւածի անկիւնը։ Այս մասին յետոյ. իսկ այժմ նայեցէք, թէ այս բոլորից ինչ է յառաջանում։

Արեգակի շուրջը պտըտելիս՝ երկիրս այն կողմը, որ ուղղակի դէպի արեգակն է լինում թեքւած, աւելի մօտիկ է լինում արեգակին. այս պատճառով սոյն կողմի վրայ լինում է ամառ. սրա հակառակ կողմը՝ լինում է ձմեռ։ Եթէ երկիրս հակւած չըլինէր դէպի արեգակը, նրա ամեն մի կէտն ու տեղը պէտք է հաւասար հեռացած լինէին արեգակից. բայց այսպէս չէ։ Յունիսի 9-ին երկիրս գտնւում է դէպի արեգակը մի այնպիսի դրութեան մէջ, որ նրա հիւսիսային ծայրը թեքւած լինելով, աւելի մօտիկ է գտնւում արեգակին. իսկ հարաւայինը՝ աւելի հեռու. բայց Յունիսի 9-ից ամբողջ տարւայ մէջ ոչ մի օր աւելի հակւած չի լինում, ուրեմն և աւելի մօտիկ չի լինում արեգակին։ Ահա այս ժամանակ մեզ համար լինում է ամառն, որովհետև գտնւում ենք հիւսիսային կիսագնտի վրայ. իսկ հարաւային ծայրում լինում է

ձմեռն։ Յայտնի է, որ երկիրս կանգնած չէ մնում. նա շարժւում է դէպի յառաջ և դեկտեմբերի 9-ին գտնւում է արեգակի հանդէպ ճիշդ հակադիր այն կէտին, ուր որ յունիսի 9-ին գտնւում էր։ Այս ճանապարհորդութեան միջոցին, նա բոլորովին չըփոխեց իր դրութիւնը, այսինքն մի կողմից դէպի միւսը չըհակւեց, այլ միայն արեգակի շուրջը պտտւելով, պտտւում էր և իր առանցքի վրայ, որովհետև իր հակումը չըփոխեց, ուրեմն դեկտեմբերի 9-ին նրա հիւսիսային ծայրն արեգակից այն չափով պիտի լինի հեռացած, որչափ որ մօտեցած էր յունիսի 9-ին դէպի արեգակը։ Այժմ նրա հարաւային ծայրը մօտեցած է դէպի արեգակը այնքան, որքան որ հիւսիսայինը հեռացած է նրանից. ուրեմն այս դրութեան ժամանակ մեր բնակւած մասում, այսինքն հիւսիսային կիսագնդի վրայ, սկսւում է ձմեռը. իսկ հարաւայինում՝ ամառը։

Մարտի 9-ին և սեպտեմբերի 10-ին երկրիս թէ հիւսիսային և թէ հարաւային ծայրերը չեն լինում հակւած դէպի արեգակը։ Այս պատճառով մարտի 9-ին հիւսիսային կիսագնտում սկսւում է գարունը, իսկ հարաւային կիսագնտում՝ աշունը։ Երկրիս մէջքը, այսինքն նրա հասարակած գիծը, միշտ արեգակից հաւասար հեռաւորութեան վրայ է գտնւում և հիւսիսային ու հարաւային ծայրերից աւելի մօտիկ է գտնւում արեգակին։ Այս պատճառով էլ այդտեղում լինում է մշտական ամառ։ Այս մի և նոյն տեղում միշտ ցերեկը հաւասար է լինում գիշերւան.—12 ժամ ցերեկ, 12 ժամ գիշեր է լինում։ Այս գոտին կարելի է անւանել ուրեմն հաւասարած գիշերահաւասարի գիծ։

Գիշերահաւասարից դէպի հիւսիս կամ դէպի հարաւ գնալով, վերջապէս կըհասնենք երկրագնտիս վրայ գտնւած այն երևակայեալ կէտերին, որտեղից երկիրս հէնց է դէպի արեգակը և կամ հեռանում)։ Դեկտեմբերի սկզբից երկիրս սկսում է փոքր առ փոքր հակւել դէպի արեգակը, հիւսիսային կիսագնտում. իսկ հարաւայինում՝ սկսում է սակաւ առ սակաւ տարհակւել նրանից։ Եթէ այդ կէտերից հասարակածին զուգահեռական գծեր քաշենք, կըստանանք երկու շրջան ևս,—մինը գիշերահաւասարից դէպի հիւսիս և միւսը՝ դէպի հարաւ։ Այս շրջանները կոչւում են արևադարձի շրջաններ։ Այսպէս է ասւում այն պատճառով, որ այնտեղից երկիրս դառնում է կամ դէպի ձմեռը, կամ դէպի ամառը։

Հասարակածից որքան դէպի հիւսիս կամ դէպի հարաւ գը-

նալու լինելնիք, այնքան զգալի կըլլնի գիշերւայ և ցերեկւայ տարբերութիւնը։ Բայց ամբողջ երկրիս վրայ տարւան մէջ միայն երկու անգամ է պատահում, որ գիշերն ու ցերեկը հաւասար են լինում.—Մարտի 9-ին, այսինքն գարնանամուտին. և սեպտեմբերի 10-ին՝ այսինքն աշնանամտին։ Այս երկու օրերում երկիրս կանգնում է դէպի արեգակը կողքովը միայն և այդ ժամանակ գրեթէ հակւած չի լինում։ Երբ ասում եմ, որ երկիրս հակւում է դէպի արեգակը և կամ տարահակւում նրանից, այս ի հարկէ բոլորովին ճիշդ չէ. բայց ուրիշ կերպ ասելն էլ դժուար է։ Նա իր մի ծայրով միշտ դարձած է լինում դէպի մի և նոյն կողմը. այս պատճառով արեգակի շուրջը պտտելիս, մօտենում է նրան մերթ իր հիւսիսային, մերթ իր հարաւային ծայրովը և մերթ կողքովը։ Երկիրս ոչ հակւում է դէպի արեգակը և ոչ էլ տարհակւում է նրանից, այլ ամբողջ տարւայ ընթացքում անփոփոխ պահպանում է իր սեփական դիրքը և այս դրութիւնով պտտւում է արեգակի շուրջը։ Սրանից հետևում է որ, մերթ մօտենում է նրան իր հիւսիսային ծայրով, մերթ կողքովը և մերթ իր հարաւային ծայրովը։ Ուրեմն երբ որ խօսք է լինում հակւելու կամ տարհակւելու մասին, չըպէտք է կարծէք, թէ նա իր բնական դիրքը որ և է կերպով կամ երբ և իցէ կարող է փոխել. բայց ասում ենք միայն հանդամանքները պարզելու համար։

Եթէ պեկտեմբերի 11-ին կանգնած լինէինք երկրիս բուն հիւսիսային ծայրում, կըտեսնէինք որ այնտեղ սկսում է ցերեկը բոլորովին կարճանալ և բոլորովին վերջանում է. սկսում է գիշերը, որ շարունակւում է մինչև մարտի 9-ը, այսինքն շարունակ վեց ամիս։ Այս նրա համար է լինում, որ երկրիս հիւսիսային ծայրը, սեպտեմբերի 11-ից սկսել էր հեռանալ արեգակից, տարահակւել էր։ Մարտի 9-ին մի և նոյն ծայրը նորից սկսում է հակւիլ դէպի արեգակը և սկսւում է ցերեկը, որ շարունակւում է վեց ամիս, այսինքն մինչև աշնան սկիզբը։ Եթէ հիւսիսային ծայրից դանք դէպի հասարակածը, հետզհետէ կընկատենք որ՝ որքան մօտենում ենք հասարակածին, այնքան կարճանում են ցերեկներն ու գիշերները և վերջապէս հասարակածի վրայ հաւասարւում են միմեանց։ Ձմեռը՝ նոյն իսկ Պետերբուրգում, ցերեկները լինում են այնքան կարճ, որ միայն չորս ժամ կարելի է լինում առանց ճրագի նստել սենեակում. այն ինչ գարնանը՝ դրա հակառակն է լինում, այսինքն գիշերը չորս ժամից էլ պակաս է լինում. համարեա թէ մթնելն ու լուսանալը մէկ է լի-

նում։ Այս բոլորը յառաջանում է երկրիս ծայրերի դէպի արեգակն ունեցած հակումներից. նրա ծայրերը աւելի հակած են լինում, քան թէ միւս մասերը։ Ուրեմն այս ծայրերը միւս մասերից աւելի երկար ժամանակ են հեռանում արեգակից. և որքան աւելի են հեռանում, այնքան էլ արեգակը սակաւ է լուսաւորում նրանց։ Որչափ հեռու լինինք երկրիս ծայրերից, այնքան շատ կըլինի մեր լոյսը. երկրիս մէջ տեղի վրայ լոյսը ամենայն տեղերից շատ կըլինի, որովհետև արեգակի ճառագայթները այնտեղի վրայ ամենից շատ են ընկնում։

Ուրեմն՝ 1, *Երկրիս տարեկան շարժումից եւ նրա դէպի արեգակը հակած դրութիւնից յառաջանում են ոչ միայն տարւայ եղանակները, այլ եւ ցերեկների եւ գիշերների երկարանալն ու կարճանալը, զանազան տեղերում։*

2, *Երկրիս օրական շարժումից, այսինքն նրա իր առանցքի վրայ պտըտւելուցը յառաջ են գալիս օրւայ ցերեկն ու գիշերը։*

Եթէ ուշադրութեամբ կարդացիք այս տողերը և լաւ հասկացաք պատմածներս, խորհուրդ կըտամ որ երբեմն դուրս գաք ձեր տան կտուրը և մեծ ուշադրութեամբ նայէք աստղազարդ երկնքին։ Դուք կընկատէք որ անբողջ երկինքը, իր բոլոր վայլուն աստղերով, շարժւում է մեղմ կերպով արևելքից դէպի արևմուտք։ Արևելեան կողմում դուք կըտեսնէք նոր աստղեր. նրանք հետզհետէ բարձրանում են դէպի երկնակամարը. այստեղից շարունակում են դէպի արևմուտք և վերջապէս այնտեղում աներևոյթանում։ Գիտէք որ այս երկինքը չէ, որ այնպէս շարժւում է, այլ մեր երկրագունդն է, որ մեզ իր վրայ առած, տանում է արևմուտքից դէպի արևելք. չիշեցէք այն մասին, ինչ որ ասել եմ ձեզ։ Երկնային բոլոր լուսատուների մէջ միմիայն լուսինն է, որ մեզ երևում է ամենից մեծը։ Միմիայն նա է, որ երևում է մեզ այլևայլ պատկերներով.—մերթ իբրև բոլորշի, մերթ իբրև կիսաբոլորշի և երբեմն իբրև մանգաղ։ Նա մեզ ամենամօտիկ երկնային մարմինն է. նա շրջում է մեր երկրագնդի շուրջը և սրա հետ միասին պտըտւում արեգակի շուրջը։ Երկրիս պէս նա ևս թաւալւում է իր առանցքի վրայ և մի և նոյն ժամանակ թաւալւում է երկրիս շուրջը ու երկրիս հետ իմիասին, արեգակի շուրջը։ Նրա զանազան պատկերները յառաջ են գալիս իր այն դիրքից, որ ունենում է դէպի արեգակն ու դէպի մեզ։ Երբ որ դարձրած է դէպի մեզ այն կողմը՝ որով նայում է դէպի արեգակը, այն ժամանակ երևում է մեզ կատարեալ բոլորշի և կա-

տարելապէս լուսաւորւած։ Երբ արեգակին նայում է իր մի կողմովը, իսկ մեզ միւս կողմովը, այն ժամանակ բոլորովին խաւար լինելով, մեզ ամենևին չի երևում։ Իսկ երբ որ դառնում է դէպի մեզ եղերքի այն ծայրովը միայն, որով դէպի արեգակն է շրջած, այն ժամանակ երևում է մեզ իբրև մանգաղ կամ եղջիւր, որ աստւում է մահիկ։

Լուսինը երկրի բոլո շուրջ պտտւում է 27 օրում, 8 ժամում և մի քանի րոպէում։ Պէտք է որ մեր ամիսները այս ժամանակի համաձայն հաշւէինք, բայց հաշւում ենք արեգակի հաշւով։ Այս է պատճառը, որ մեր ամիսը աւելի օրեր է ունենում, քան թէ լուսինը։

Այսքանովս ես վերջացնում եմ այն՝ ինչ որ ասել էի կամենում սկզբում։ Համառօտապէս մտաբերենք այն ամենը՝ ինչ որ մեր բացատրութիւններից կարողացանք եզրակացնել։

1. Տեսանք որ՝ ձողաչափի (մասշտաբ), անկիւնի, եռանկիւնու և շրջանի միջոցաւ, որ բաժանւած է 360 աստիճանի, չափում են ոչ միայն երկիրս, այլ և երկնային լուսաւորները և հաշւում են նրանց հեռաւորութիւնը երկիրիցս։

2. Մի և նոյն գործիքների միջոցաւ գծում են շէնքերի նախագիծը, որ եթէ իսկոյն մեծ տեղի համար է լինում գծած՝ շատ էլ ճիշդ չի լինում։ Գիտենք որ երկրիս երեսը տափակ չէ, այլ կորնիժարմ է ամենայն տեղում. ուրեմն մակարդակը պէտք է նկարել ոչ թէ տափարակ, այլ ուռուցիկ կամ կորնիժարմ մակերևոյթի վրայ։ Այս է պատճառը, որ եթէ կամենում են երկրիս ամբողջ մակարդակը գծել, նկարում են նրան գնտի վրայ։ Այսպիսի գունտն ասւում է երկրագունտ։ Երկրագունտը լատիներէն գլօբուս է կոչւում, որ դարձեալ գունտ է նշանակում։ Փոքրիկ հողաբաժնի մակարդակը ճիշդ է լինում այն պատճառով, որ փոքրիկ տարածութեան վրայ բոլորովին չի երևում երկրիս կորութիւնը։ Ամբողջ երկրիս մակարդակը կամ նրա կէսը և կամ թէ մի մեծ հողաբաժնի մակարդակը կոչւում է հորիզոն։

3. Մեր երկիրը մի ահագին գունտ է, որ դրւած է օդի մէջ ազատ, և պտըտւում է արեգակի շուրջն ու թաւալւում իր առանցքի վրայ, լիսեռնի պէս։

4. Նա պտըտւում է արեգակի շուրջը 365 օրում, 48 րոպէում և 48 վայրկենում. այս է իսկական տարին։

Օրւայ մէջ՝ այսինքն 24 ժամում, երկիրս իր առանցքի վրայ թաւալւում է մի անգամ և սրանից է յառաջանում ցերեկն ու գիշերը։

6. Ուրեմն երկիրս շարժւում է երկու կերպ.—նախ՝ ինքն իր վրայ, որ է օրական շարժումն. երկրորդ՝ արեգական շուրջը, որ է տարեկան շրջանառութիւնը։

7. Երկիրս ունի հիւսիսային և հարաւային ծայրեր կամ բեւեռներ, որոց միջովն է անցնում նրա մտաւոր առանցքը։

8. Երկիրս հակւած է միշտ դէպի մի և նոյն կողմը. և դրանից է, որ մերթ նրա մի ծայրը, մերթ միւսը՝ դարձած է լինում դէպի արեգակը։

9. Այն կողմը, դէպի ուր թաւալւում է երկիրս իր առանցքի վրայ, կոչւում է Աբէլ. որովհետև այն կողմից է ծագում արեգակը. նրա դիմացի կողմը՝ Աբէլ-պ, որովհետև այնտեղ է մայր մտնում արեգակը։ Երկիրս շարժւում է արևմուտքից դէպի արևելք։

10. Տարւայ եղանակները յառաջանում են երկրիս տարեկան շրջանառութիւնից և դէպի արեգակն ունեցած հակումից։

Պատմելով ձեզ այս գլխաւոր դէպքերը երկրիս վերաբերմամբ, այսինքն այնպէս, ինչպէս որ է նա իրօք, այսուհետև պիտի պատմեմ ձեզ թէ նա ինչպէս է կազմւած և թէ ինչ բանով է ծածկւած նրա մակերևոյթը։

Ս. Փ. ԲԼԳ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԻՍԼԱՆԴԻՍՏՈՒՄ

Երկու զւիցերացի ճանապարհորդ սակաւայայտ Իսլանդիա կղզու բնակիչներուն սկզբնական կրթութեան մասին պատմում են հետեւեալը։ Մենք ծանօթացանք նոյն տեղի բնակիչների կեանքին և ուզեցանք իմանալ նաև թէ որտեղ և ինչպէս են ուսում առնում այն մանուկները, որոնք կամ աղքատութեան և կամ հեռաւորութեան պատճառով հնար չունին ուսումնարան գնալ։ Մեր այս հարցմունքին պատասխանեց մի երիտասարդ ուսումնական, որ Իսլանդիայի դիխաւոր քաղաքի բժիշկն էր, ասելով՝ «Մեր բոլոր մանուկները եօթը տարեկան դառնալով, արդէն իմանում են գրել, կարդալ և հաշուել իրանց մայրենի լեզուով։ Աղքատ ձկնորսների մէջ ոչ մի հոգի չըկայ, որ սկզբնական կրթութիւն ստացած չըլինի։ Ուսում տուողները մեր մայրերն են, իսկ ուսումնարանը՝ մեր ծնող տունը։ Մօտակայ գիւղի քահանան հսկում է մանուկների ուսման վրայ և նըւազ յառաջադէմ մանուկը մօտ չի թողնըւում առաջին հաղորդութեան (конфирмація)։ Բայց այսպիսի դէպք, որ երեխան այնքան անպատրաստ և անուս լինի, որ հաղորդութեան չարժանանայ, մեղանում չըլսւած բան է, և եթէ պատահէր, այդ նրա մօր համար մահացու հարւած կրլինէր։ Հարցրէք՝ որ երիտասարդ ձկնորսին կամենաք՝ թէ ով է սովորեցրել նրան իր հայրենիքի աշխարհագրութիւնը, պատմութիւնը, տեղական

թռչունների և բոյսերի անունները, և դուք անպատճառ կըլսէք այսպիսի պատասխան.—«Մօդր մին», այսինքն՝ իմ մայրը»:

Հազար վիճակ ու պատիւ այսպիսի մայրերին...

*
* *

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՆ ԸՆՏՐՈՒՄ ՉԻՆԱՑԻՔ ԿԱՐԴԱԼՈՒ ԳԻՐՔԸ

Երբ չինացին ուզում է իր համար մի կարդալու գիրք առնել, նա այս բանի համար գործ է դնում մեծ զգուշութիւն: Ամենից առաջ նա հարցնում է, թէ ինչ բովանդակութիւն ունի այն գիրքը, որ գրավաճառի խանութում առաջարկում են նրան գնելու: Չինացին երբէք մի գիրք չի առնիլ դատարկ հետաքրքրութիւնից կամ իր զբաղմունքեանն համար: Եթէ նրան կասեն, որ նոյն գրքի նպատակն այն է՝ որ սովորեցնէ մարդուն լինել աւելի խելօք, կամ այն է՝ որ սովորեցնէ նրան շտկել իր ունեցած թերութիւնները, ապա սոյն տեսակ գրքերը մեծ քանակութեամբ կը ծախուին Չինաստանի պէս ահագին տէրութեան մէջ: Բայց առաւել ևս այն ժամանակ է տարածւում գիրքը, երբ ապացուցանւում է, որ նա քաջալերում է կարդացողներին դէպի իրանց հինգ առաքինութիւնը, այսինքն՝ դէպի ազնուութիւն, բարեզործութիւն, իմաստութիւն, պատւականութիւն և ողջախոհութիւն. կամ դէպի մարդկային հինգ պարտաւորութիւնը, որոնք յարգւած են ամբողջ Չինաստանում, որպիսիք են—արքայի պարտաւորութիւնները դէպի իր հպատակները, ծնողաց պարտաւորութիւնը դէպի իրանց զաւակները, այր ամուսնուն՝ դէպի իր կինը, մեծ եղբայրներինը՝ դէպի կրտսերները, և վերջապէս երկու բարեկամների առ միմեանս ունեցած պարտաւորութիւնը: Այս է պատճառը, որ մեր Աստուածաշունչը և նրա առանձին մասերը շատ արագ և ընդարձակ տարածութիւն են գտնում Չինաստանում:

*
* *

Այրերի Համար Ռուսաստանում բացած բոլոր ուսումնարաններում — Պետերբուրգ, Մոսկւա, Կիեւ, Ռէւէլ, Կազան, Վօրոնէժ—ներկայումս սովորեցնում են երկու ձեւի գրութիւն. մէկով (Հէբէլդի սիստեմով) կոյրերը գրում են չկոյրերի Համար տպագրական տառերով. բայց իրանց այդ ձեւով գրածը իրանք չեն կարող կարդալ, այլ միայն տեսնողները. իսկ միւս ձեւով (Բրայլի սիստեմով) կոյրերը գրում են կոյրերի Համար կորնթի (ուռուցիկ) կէտերով, որպէս զի կարելի լինի շօշափել: Այս կէտաձեւ այբբենը Ռուսաստանում այնպէս կատարելագործել են, որ կոյրերը նրանով կարող են սովորել բոլոր եւրոպական լեզուները:

Ահաւասիկ այդ այբբենը.



ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ



Այս փոքրիկ քառանկիւնիների մէջ գետեղեցէք մի-մի տառ այնպէս՝ որ ✻ տողում ստացւի մի բառ, որ նշանակէ մի սարի անուն։

բ. տողում մատենագրի անուն։
գ. » Մի գոյական անուն, որ թռչունի շապիկն է։
դ. » Մի հրամայական բայ։
ե. » Եղջերաւոր կենդանիներ։
զ. » Երկու հրամ. եղանակով բայեր Ա–ով մեացած։
է. » Յայտնի կաթողիկոսի անուն, այնպէս որ սկզբնատառերը եթէ վերևից ներքև կարդալու լինինք, ստացւի մի Հայ վիպասանի աղգանունը, իսկ վերջին տառերը՝ նոյն հեղինակի անունը։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Որոնեցէք յատուկ անուն,
Կազմած լինի երկու վանկից.
Երկուսն է բայ անուն,
Հրամայական եղանակից։

2. ա) Մի բայ գիտեմ հրամայական,
Վերցնենք նրան երկու անգամ
Եւ ստանանք մի գոյական,
Որ մեր խանութի պահապան
Ներսէս եղբօրն է խիստ արժան։

բ) Այդ պահապանը Ներսէս,
Մի շուն ունի յարալէզ,
Որի անունը նոյնպէս
Սկսում է տիրոջ պէս։

գ) Չան անունն էլ երկու վանկից,
Կազմած է զատ-զատ բառերից.
Թէ երկրորդից կ-էն վերցնենք,
Առաջինի տողին կպցնենք,
Մի ընտիր բոյս մեզ կըստանանք,
Ուտենք, խմենք, հարստանանք։

դ) Պնացորդն է մի կենդանի,
Որ օջախին շատ պիտանի։

ե) Բառական, ինչ ձգձգեցինք,
Հերիք, ինչ որ գղգղեցինք,
Կարդանք այս բառը Թարս կողմից,
Եւ ըստանանք միջատ նորից։

***

3. Ամեն մէկը մեզանից
Ցան մէջ ունինք պերասան,
Թէև համր է, հետն էլ խուլ,
Բայց կըտեսնէ ամեն բան։

Համարձակ է, շատ ճարպիկ,
Նա չի քաշւում ոչ ոքից.
Ինչպէս ծաղրածու կապիկ,
Ընդունակ է ամենքից։

Զարժւածքներն է բնական,
Մի մէկը զարմանալի,
Կրկատարէ ամեն դեր
Վարպետութեամբ հրաշալի։
Մի ձև ցոյց տաս, հերիք է,
Իսկոյն կառնէ օրինակ.
Բայց կենաց մէջ չըտեսաւ,
Դէթ մի ընծայ, ծաւի, պսակ։

Ա. ՍԱՐԴԱՐԵԱՆ

ՐԵԲՈՒՍ

№ 11 ՄԷՋ ԵՂԱԾ ԴՐԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1. Բայ, զայ, թայ, հայ, ճայ, նայ, չայ, պայ, վայ, վայ։ 2. գող, ղող, թող, լող, կող, հող, ձող, շող, սող, տող, ցող, (ցողուն և ոչ ցօղ), փող, քող։

Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը. 1) Առաստաղ. 2) Ծամացոյց. 3) Կճրխկճրխկացնէ. 4) Գնդակ.

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ